Ազգ
Azg
19 ԱՊՐԻԼ 2012 ՀԻՆԳՇԱԲԹԻ 71(4923)
ISSN: 1829-1651

# Էհուդ Բարաք. «Չենք խոստացել չռմբակոծել Իրանը»

## Իրանում հիմնվել է միջուկային ճգնաժամերի կարգավորման շտաբ

Իսրայելի պաշտպանության նախարար Էհուդ Բարաքը բանակի ռադիոկայանին տված հարցազրույցում հայտարարել է, որ Իսրայելի կառավարությունը ԱՄՆ-ին չի խոստացել չռմբակոծել իրանական միջուկային օբյեկտները Թեհրանի հետ բանակցությունների վարման ժամանակ:

Բարաքը Արեւմուտքի հետ վարվող այդ բանակցություններն անվանել է «թանկարժեք ժամանակի դատարկ վատնում», քանի որ երկխոսությունը չի կարող Իրանի ղեկավարությանը համոզել հրաժարվելու միջուկային զենքի մշակումից:

Ավելի վաղ Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն եւս դատապարտել էր Արեւմուտք-Իրան բանակցությունները: Նրա խոսքերով, առանց իրանական կողմի զիջումների մայիսի 23-ին Բաղդադում բանակցությունների երկրորդ փուլն անցկացնելու որոշումը նշանակում է, որ Թեհրանը եւս 5 շաբաթ նվեր է ստացել միջուկային ծրագրի շարունակման համար:

Մինչդեռ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը հայտարարել է, որ իր երկրի դեմ ուղղված ամեն մի նախահարձակում դատապարտված է ձախողման, եւ նախազգուշացրել է, որ Թեհրանը կհասցնի խորտակիչ հակահարված: Նա հայտարարությամբ հանդես է եկել Իրանի զինված ուժերի օրվա առթիվ:

Երեկ նաեւ հայտնի է դարձել, որ Իրանի իշխանությունները հիմնել են միջուկային ճգնաժամի կարգավորման հատուկ շտաբ: IRNA գործակալությունը հաղորդում է, որ շտաբը կզբաղվի «միջուկային սպառնալիքներով, այդ թվում՝ շրջակա միջավայրի աղտոտման հարցերով»: Նոր շտաբը ստեղծվել է ԱԷԿ-ի էլեկտրականության օգտագործման ընդլայնման շրջանակներում: Կառույցը գլխավորում է Իրանի ատոմային էներգիայի գործակալության ղեկավար Աբբասի Դավանին:

# Ռեկտորն ու նախարարը կհանդիպեն դատարանում

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ




Այն պահին, երբ կրթության ու գիտության նախարարության դիմաց Երեւանի Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի մի քանի հարյուր ուսանողներ ի պաշտպանություն ռեկտոր Սուրեն Զոլյանի բողոքի ակցիա էին անցկացնում՝ հայտարարելով՝ «Չկա Զոլյան, չկա Բրյուսով», պահանջելով, որ նախարարը դուրս գա Facebook-ից եւ իրենց հետ շփվի, նախարարի Facebook-յան էջը Բրյուսովի անվան համալսարանի մասին գրառումներով էր լցվում: ԿԳ նախարարին հիշեցնում էին, թե Զոլյանի օրոք Բրյուսովն ինչ հաջողություններ է գրանցել, նշում, որ նախարարն անհիմն է հեռացրել ռեկտորին եւ պահանջում նրան վերականգնել պաշտոնում:

Համալսարանի շուրջն առաջացած կրքերի օրվա գլխավոր newsmaker-ները կրկին Աշոտյանն ու Զոլյանն էին: Վերջինս Բրյուսովում կայացած ասուլիսի ժամանակ անհիմն որակեց նախարարի երկու նկատողությունները: Նրա մեկնաբանությամբ՝ Աշոտյանի ստորագրած ազատման հրամանում կան օրենքի շեղումներ, եւ նախարարը երկիրն անհարմար վիճակի մեջ է դրել Եվրոխորհրդարանում: «Առաջին նկատողությունն ինձ տրվեց, որովհետեւ, որպես Եվրոխորհրդի փորձագետ, պարտավոր էի մասնակցել համապատասխան կոմիտեի աշխատանքներին եւ գնացել էի երկրից: Կառավարությունն իրավունք չունի միջամտելու փորձագետի աշխատանքներին: Եվրոխորհրդում քննարկվում է այս դեպքը, որովհետեւ անհասկանալի է, թե ինչպես Եվրոխորհրդի փորձագետին իր աշխատանքը պատշաճ կատարելու համար կարելի է ազատել աշխատանքից: Վստահ եմ՝ Եվրոխորհրդարանը խիստ կարձագանքի»:

*Տես էջ 2*

# Միայնակ քարոզարշավի երկու բացատրություն

ՀՀԿ պատգամավոր **Արտակ Զաքարյանից** հետաքրքվեցինք՝ ունի՞ բացատրություն, թե ինչո՞ւ է Սերժ Սարգսյանը միայնակ, առանց ՀՀԿ հայտնի գործիչների հանդիպում ընտրողների հետ: Ա. Զաքարյանը ուղղեց հարցի շեշտադրումը՝ քարոզարշավն իրականացվում է կուսակցության նախագահի ղեկավարությամբ, սա նաեւ հասարակության հետ շփվելու լավ առիթ է. նախագահի հետ ուղիղ շփումներով ընտրողն ավելի վստահ եւ ավելի հիմնավորված քվեարկություն կկատարի: Դա նաեւ ընտրողի համար հնարավորություն է՝ երկրի եւ կուսակցության նախագահի հետ քննարկելու ամենատարբեր տեղական եւ ավելի գլոբալ նշանակության հիմնախնդիրներ: Ըստ Ա. Զաքարյանի՝ կուսակցության ողջ ակտիվը ներառված է քարոզչական գործընթացում, ձեւավորվել են խմբեր, որոնք լոկալ հանդիպումներում մարդկանց հետ քննարկում են խնդիրները, յուրաքանչյուր ընտրողի հետ առանձին աշխատանք է տարվում այդպիսի խմբերում՝ ամենափոքր խնդրի վրա անգամ ուշադրություն դարձնելով: Իսկ նախագահի հետ տվյալ մարզի քաղաքական գործիչներն են լինում, մարզի կուսակցական ակտիվը՝ ի՞նչ իմաստ ունի Երեւանից նույն շքախմբով բոլոր տեղերը գնալ:

Սակայն նույն հարցի վերաբերյալ բոլորովին այլ պատասխան ուներ քաղտեխնոլոգ **Կարեն Քոչարյանը**, որը նշում է, թե ոչ միայն ՀՀԿ-ի, այլեւ մյուս կուսակցությունների քարոզարշավն այնպես է կազմակերպված, որ, իր խոսքով, «ցցում են լիդերներին»: Միայնակ քարոզարշավ տանում են նաեւ Րաֆֆի Հովհաննիսյանը (մեր անհամաձայնությանն ի պատասխան՝ Կ. Քոչարյանը նշեց «Ժառանգության» հեռուստատեսահոլովակները), Գագիկ Ծառուկյանը, Լեւոն Տեր-Պետրոսյանը, որոնց ռեալ քարոզարշավը կառուցվում է մեկ անձի վրա. «Տպավորություն է, որ սա նախագահական ընտրությունների քաստինգ է ավելի շատ, քան Ազգային ժողովի ընտրությունների: Ի տարբերություն Ր. Հովհաննիսյանի, Սերժ Սարգսյանի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ Գագիկ Ծառուկյանի դեմքը հետո փոխարինվելու է Վարդան Օսկանյանով (՞), եթե հանկարծ «Բարգավաճը» հավաքի շատ տոկոս եւ չգնա իր իսկ ստորագրությունը պահպանելու ուղիով (նախագահական ընտրություններում չպաշտպանի Սերժ Սարգսյանի թեկնածությունը), որի դեպքում «Բարգավաճի» թեկնածուն լինելու է Վարդան Օսկանյանը, ոչ թե Գագիկ Ծառուկյանը», համոզված էր Կ. Քոչարյանը:

**Մ. Խ.**

# Ադրբեջանն Իսրայելի հետ մերձեցմամբ առնվազն զինվում է

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Արաբական գարնան ներկայիս վերլուծությունները առավելապես առաջ են քաշում էներգակիրների ու դրանց տեղափոխման երթուղիների շուրջը զարգացումների հետ «հեղափոխությունների» սերտ կապը այն դեպքում, երբ նույն էներգակիրները որեւէ կերպ չեն կարող բացառվել Պարսից ծոցում ու աշխարհագրական այդ տարածքից այլ վայրեր երթուղիների շրջակայքում հրահրված բոլոր ռազմական գործողությունների պարագայում:**

**Իրանը բացառություն չէ, թեեւ Ծոցի եւ Կասպից ծովի պաշարների առնչությամբ խոսակցությունները մշտապես քողարկվում են ժողովրդավարության կողմնակիցներ ներկայանալու մեկնաբանություններով, վերջին շրջանում էլ՝ Իրանի միջուկային խնդրով: Եվ այն, որ Իրանի շուրջը լրջագույն ամպեր են կուտակվում, նախ եւ առաջ բխում է Սիրիայի իրավիճակի լարվածությունից:**

**Ամեն դեպքում, այս ոլորտապտույտում Իրան-Ադրբեջան հարաբերությունները եւ դրանց վատթարացումը կարող են որպես ցուցանիշ ծառայել ենթադրությունների, թե որքանով են մոտ իրականացմանը Իրանի վրա հնարավոր հարձակման պլանները կամ ինչ արդյունքի կարող են հասցնել այդ երկրի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները՝ չմոռանալով, որ Իրանում որեւէ գործողություն կարող է տակնուվրա անել ողջ տարածաշրջանը՝ բառի ամենաընդգրկուն մասշտաբներում:**

**Իրանական լրատվամիջոցները մեկը մյուսի հետեւից հրապարակումներ են անում Իրանի դեմ Ադրբեջանի քայլերի ներկայացմամբ, միջազգային մամուլն էլ առանձնակի հետ չի մնում նմանօրինակ պահվածքի դրսեւորումից: Երեկ իրանական մամուլն արդեն տեղեկացնում էր, թե Իրան-Ադրբեջան սահմանին 30 տանկ է տեղակայվել ադրբեջանական կողմից, ընդ որում՝ իրանական կողմի տեղեկություններով՝ տանկերը իսրայելական արտադրության են:**

**Մյուս կողմից, Իսլամական կոնֆերանսի երկրների ուշադրությունն է Իրանը հրավիրում Ադրբեջանի այնպիսի հայտարարությունների վրա, ըստ որոնց այդ երկիրն իսլամական չէ կամ ամբողջովին չէ այդպիսին: Ակնհայտորեն, տվյալ դեպքում Ադրբեջանն ի ցույց է դնում իր քամելեոնային հատկությունները, ըստ հարմարության ներկայանալով ինչպես իսլամական, այնպես էլ ոչ այդպիսին, մշտապես հաշվարկելով, որ նույն Իսլամական կոնֆերանսի երկրների ձայներն են «կանաչ լույս» վառում, օրինակ, ՄԱԿ-ում Ադրբեջանի՝ ղարաբաղյան թեմայով նախաձեռնած բանաձեւերին:**

*Տես էջ 3*

# Մեկ զոհ եւ մեկ վիրավոր սահմանին

Երեկ հայ-ադրբեջանական հենակետերի միջեւ մի քանի ժամ տեւողությամբ հրաձգություն է տեղի ունեցել, որի հետեւանքով Տավուշի մարզի Չինարի գյուղի զորամասում հրազենային վնասվածքից մահացել է 22-ամյա ժամկետային զինծառայող Զորիկ Մարգարյանը: Եվս մեկ ժամկետային զինծառայող՝ 22-ամյա Կարեն Մովսիսյանը, ծանր վիրավորվել է եւ գտնվում է բժիշկների հսկողության ներքո: Նրա վիճակը գնահատվում է բավարար: Երկու զինծառայողներն էլ գարնան ավարտում էին իրենց ծառայությունը:

**Հ. Հ.**

# Դալմայի այգիները վտանգված են

Կանաչ տարածքների պահպանման համար մղվող պայքարը՝ թվում է, երբեւէ չի դադարելու: Ի հեճուկս կանաչ տարածքների ոչնչացման հաշվին հարստացողների, մարդիկ շարունակելու են պայքարել հանուն էկոլոգիապես մաքուր միջավայրում ապրելու իրենց իրավունքի:

Ներկայումս վտանգված են նաեւ Դալմայի այգիները, որոնք կազմում են մայրաքաղաքի սակավաթիվ կանաչ կղզյակներից մեկը:

Մի քանի օր առաջ **«Ազգը»** տեղեկացրել էր, որ Իսակովի պողոտան Լենինգրադյանին կապող հատվածում ճանապարհաշինության քողի տակ ավերվում են Դալմայի այգիները, հատվում են ծառերն ու խաղողի վազերը: «Արմաս» ակումբի բանախոսները երեկ նույնպես փաստեցին լուրը: «Սպառողների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ **Արմեն Պողոսյանի** տվյալներով՝ այդ տարածքում խոյանալու են առանձնատներ ու զվարճանքի օբյեկտներ:

Իսկ «Դալմա-Սոնա» մշակութային հիմնադրամի նախագահ Ռուզան Ղազարյանը տեղեկացնում է՝ դեռ 2009-ի հոկտեմբերին «Դալմա մոլ» կազմակերպությունն արեց շնորհանդեսը Հայաստանի ամենախոշոր զվարճանքի կենտրոնի շինարարության, բնականաբար, ճանապարհը, որի կառուցման մասին խոսվում է, պետք է սպասարկի ամենամեծ զվարճանքի կենտրոնին, որն էլ ներառելու է սրճարաններ, խանութներ, կինոթատրոններ: Եվ ճանապարհի կողքերից կառուցող ընկերությունն առեւտրի կենտրոնների ու խանութների համար ստանալու է հողատարածքներ, որոնք դեռեւս մասն են կազմում Դալմայի այգիների: Բանախոսների ընդհանրական ձեւակերպմամբ՝ նշված տարածքում կառուցվելու է էլիտար թաղամաս:

Որո՞նք են կառուցապատող ընկերությունները եւ քանի՞սն են դրանք, **Ռուզան Ղազարյանը** պատասխանում է՝ դեռեւս մեկի անունն է հայտնի՝ «Սահակյանշին» կազմակերպությանը, որը շինարարական աշխատանքներ է կատարում ջրանցքի մոտակայքում: Ջրանցքը կառուցվել է մեր թվարկությունից առաջ, սակայն պարզելու համար՝ ունի՞ պատմամշակութային արժեք, ըստ հնագետ **Արտավազդ Զաքյանի**, պետք է մասնագիտական հետազոտություն արվի: Անկախ մասնագիտական գնահատականից՝ տիկին Ղազարյանն ընդգծում է՝ ջրանցքը եւս վտանգված է:

Հիշեցնենք, որ «Սահակյանշին» ընկերությունը շինարարությունը կատարում է առանց շինթույլտվության ու հողահատկացման:

Հետագա զարգացումները ցույց կտան, թե ի՞նչ ճակատագիր է սպասում Դալմայի այգիներին եւ արդյոք կպահպանվե՞ն ներկայիս կանաչ տարածքները: Այնուամենայնիվ շատ բան կախված է եւ լայն հանրության արձագանքից:

**Ի. Պ.**

# Հայաստանը 6 միավորով բարելավել է իր դիրքը

## *Մրցունակության ցուցանիշով զբաղեցնելով 92-րդ տեղը 142 երկրների մեջ*

«Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնը եւ «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերությունը երեկ հրապարակեցին Հայաստանի 2011-2012 թվականների Ազգային մրցունակության զեկույցը: Միջոցառմանը մասնակցում էր եւ ելույթ ունեցավ վարչապետ **Տիգրան Սարգսյանը**: Նա նշեց, որ կառավարությունը մեծ նշանակություն է տալիս երկրի մրցունակության բարձրացման խնդիրներին՝ դիտարկելով այն ժամանակակից աշխարհի կարեւորագույն հասկանիշներից մեկը: «Ազգային մրցունակության բարձրացմանն ուղղված կառավարության միջոցառումները շեշտակիորեն փոխվել են: Մասնավորապես, կառավարությունը որդեգրել է նոր քաղաքականություն, որի նպատակն է մակրո կարգավորումներից անցնել միկրո միջավայրում բիզնեսի համար բարենպաստ պայմանների ստեղծմանը: Այդ տեսակետից արդյունաբերական ճյուղային քաղաքականությունը, որը միտված է արտահանման ծավալների ավելացմանը, դրա վառ օրինակներից մեկն է», ասաց Տիգրան Սարգսյանը:

Ազգային մրցունակության զեկույցը, վարչապետի կարծիքով՝ հնարավորություն է տալիս համեմատության մեջ՝ տարածաշրջանային կամ համաշխարհային կտրվածքով, տեսնել Հայաստանի ընդհանուր պատկերը, բացահայտել մեր երկրի մրցունակության թույլ կողմերի պատճառները, ինչպես նաեւ ճշգրիտ գնահատել այն միտումները, որոնք կարող են էապես ավելացնել մեր երկրի մրցունակությունը:

Համաձայն Ազգային մրցունակության զեկույցի, Հայաստանի մրցունակությունը, որն աստիճանական անկում է գրանցել 2005-ից ի վեր, 2011-ին Հայաստանը զգալիորեն բարելավել է իր դիրքը 2010-ի համեմատ: Հայաստանը 2011-ին զբաղեցրել է 92-րդ տեղը 142 երկրների մեջ՝ 2010-ի արդյունքների համեմատ բարելավելով իր դիրքը 6 միավորով: 2008-ից դիտվող անկման միտումների համատեքստում, 2011-ին գրանցվել է 4,6 տոկոս աճի տեմպ: Զեկույցում արձանագրվել է, որ համեմատ այլ երկրների՝ Հայաստանը համարվում է ամենացածր պարտք ունեցող երկրներից մեկը, որի արտաքին պարտքի սպասարկման գործընթացը գտնվում է կառավարելիության մակարդակում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# 5 շուկաներից գերիշխող դիրք միայն կոնյակի շուկայում

Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը երեկ ներկայացրել է իր վերլուծությունները 5 ապրանքային շուկաներում կենտրոնացվածության աստիճանի վերաբերյալ: Համաձայն այդ ուսումնասիրության, բարձր կենտրոնացվածություն կա միայն մեկ շուկայում, իսկ մնացած շուկաները մրցակցային են:

«Բնական հյութեր» ապրանքային շուկայում 2011-ին գործունեություն են իրականացրել 56 տնտեսվարողներ, որոնցից իրացման առավել մեծ ծավալներ ունեն «Ադամյում» ընկերությունը՝ (21,13 % մասնաբաժին), «Կոկա-կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերությունը՝ (16,74 % մասնաբաժին) եւ «Սիս Նատուրալը» ՝ (13,47 % մասնաբաժին): Այստեղ գերիշխող դիրք ունեցողներ չկան:

Երշիկեղենի արտադրության եւ իրացման ոլորտում գործունեություն են իրականացրել 43 տնտեսվարողներ: Իրացման առավել մեծ ծավալներ ունեն «Մուշ» ընկերությունը՝ 19,59 % բաժնով, «Աթենք» ընկերությունը՝ 13,98 % բաժնով, եւ «Բեկոն Պրոդուկտը»՝ 12,50 % մասնաբաժնով: Հանձնաժողովի դիտարկմամբ, այս շուկայում եւս գերիշխող տնտեսվարողներ չկան, այն ունի կենտրոնացվածության միջին աստիճան:

«Մակարոնեղեն» ապրանքային շուկայի գործում են 95 տնտեսվարողներ: Առավել խոշորներն են «Էյ-էյ-էֆ-փի-սի» ընկերությունը՝ 15,8 % , «Ջի Էյջ Սթորիջ Էնթերփրայզս» ընկերությունը՝ 9,3 % եւ «Թալգրիգ» ընկերությունը՝ 9,2 % մասնաբաժիններով: Այս ապրանքային շուկան ունի կետրոնացվածության ցածր աստիճան:

«Գինի» ապրանքային շուկայում ուսումնասիրվել է 41 տնտեսվարողների գործունեությունը: Իրացման առավել մեծ ծավալներ ունեն 3-ը: Դրանք են «Պռոշյանի կոնյակի գործարանը»՝ 22,60 % բաժնով, «Վեդի ալկո»՝ 16,68 % բաժնով եւ «Հոկտեմբերյանի կոնյակի գործարանը»՝ 14,22 % մասնաբաժնով: Այստեղ եւս գերիշխող դիրք ունեցողներ չկան:

Ինչ վերաբերում է տեղական կոնյակի արտադրությանը, ապա հանձնաժողովի ուսումնասիրության համաձայն, այս շուկայում իրացման առավել խոշոր ծավալներ ունեն 3 գերիշխող ընկերություններ՝ «Երեւանի կոնյակի գործարանը», «Պռոշյանի կոնյակի գործարանը» եւ «Հոկտեմբերյանի կոնյակի գործարանը»:

Ա. Մ.

# DINERS CLUB-ը Հայաստանում՝ «Արարատբանկի» միջոցով

## *2012-ի վերջին կթողարկվեն Diners Club International-ի հայաստանյան պլաստիկ քարտերը*

«Արարատբանկի» շնորհիվ Հայաստան մուտք կգործի համաշխարհային ճանաչում ունեցող եւս մեկ վճարահաշվային համակարգ՝ DINERS CLUB-ը: Երեկ բանկի վարչության նախագահ Աշոտ Օսիպյանը եւ DINERS CLUB-ի միջազգային կապերի գծով տնօրեն Ժան Ֆրանսուան պայմանագիր ստորագրեցին համագործակցության մեկնարկի մասին:

**Աշոտ Օսիպյանն** իր ելույթում նշեց, որ արդեն ավանդույթ է դարձել, որ «Արարատբանկը» յուրաքանչյուր տարի ներկայացնում է նոր քարտ: 2010-ին դա «Կլասիկ M» մետոյի դուալ քարտն էր, 2011-ին՝ VISA ավտոքարտը, իսկ ահա 2012-ին՝ Diners Club International պլաստիկ քարտերը կլինեն: Ներկայումս ընթանում են այդ քարտի հայաստանյան տարբերակի դիզայնի մշակման աշխատանքները եւ մինչեւ տարեվերջ կթողարկվի: Աշոտ Օսիպյանը տեղեկացրեց, որ նոր քարտը թողարկելիս հաշվի են առնվելու Հայաստանի հաճախորդների հնարավորությունները:

Ըստ «Արարատբանկի» վարչության նախագահի, առաջին տարում բանկը կթողարկի Diners Club International 5 հազար քարտ, իսկ երեք տարիների ընթացքում այդ թիվը կհասցնի 20 հազարի: Նա ընդգծեց, որ այս քարտերը շատ կարեւոր են հատկապես նրանց համար, ովքեր ունեն բարձր եկամուտներ, շատ ճամփորդում են, օգտվում օդանավակայաններից, հյուրանոցային եւ ռեստորանային ծառայություններից: Թեեւ այն նախատեսված է բոլոր շերտերի համար՝ ուսանողներ, թոշակառուներ եւ այլն:

DINERS CLUB-ի պատմությունը ներկայացրեց **Ժան Ֆրանսուան**: Նա մասնավորապես նշեց, որ այն հիմնել է Ֆրանկ Մակնամարան: Սկզբնական շրջանում դա ակումբ էր, որ մարդկանց համախմբում էր ընթրիքի շուրջը: Հետագայում դարձավ համաշխարհային ճանաչում ունեցող վճարահաշվային համակարգ: Ներկայումս Diners Club International-ի քարտերն ընդունվում են աշխարհի 185 երկրներում, դրանց քարտապանները ունեն զգալի առավելություններ՝ կոնսիերժ ծառայություններից մինչեւ աշխարհի 450 օդանավակայանների սրահներ մուտք գործելու հնարավորություն: Ժան Ֆրանսուան նաեւ հայտնեց, որ իրենք DINERS CLUB են բացել վերջերս Վրաստանում, այժմ Հայաստանում, մի քանի ամիս հետո՝ մեր «հարեւան երկրում»:

«Արարատբանկի» նոր նախաձեռնությունը ողջունեց ԿԲ խորհրդի անդամ **Վախթանգ Աբրահամյանը**: Նա պատահական չհամարեց, որ համաշխարհային ճանաչում ունեցող բրենդը Հայաստան է ներմուծել «Արարատբանկը», քանի որ հետեւողական քաղաքականություն է տանում նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: ԿԲ ներկայացուցիչը նշեց, որ DINERS CLUB-ը բոլոր քարտերի նախահայրն է: Այն դեռեւս 1972-ին կիրառվել է նաեւ մեր երկրում՝ «Ինտուրիստ» համակարգի միջոցով:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐԺԱՆԱՎՈՐ ՄԱՐԴՈՒՆ

# Բարերար Մանթաշյանցի արձանը Երեւանի կենտրոնում




Քաղաքապետ Տարոն Մարգարյանի հրավերով արդեն մեկ շաբաթ Երեւանում են հայ մեծահարուստ, մեծ բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի թոռը՝ Ալեքսանդր Մանթաշյանցը, եւ ծոռը՝ Միքայելը: Մանթաշյանցներին ընդունել են Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Իսկ երեկ ներկա են գտնվել բարերարի արձանի բացմանը: Աբովյան-Սայաթ-Նովա փողոցների հատման մասում այսուհետեւ անցորդները մի պահ կանգ կառնեն ու կծանոթանան հայ հայտնի նավթարդյունահանող բարերար Մանթաշյանցի կյանքին ու գործունեության մասին պատմող ոչ միայն ՀՀ վաստակավոր քանդակագործ Տիգրան Արզումանյանի բրոնզաձույլ արձանին, այլեւ բարերարի մասին հրատարակված գործերին: Իսկ «Մոսկվա» կինոթատրոնում ցուցադրվեց «Մանթաշյանցների պատգամները» ֆիլմը:

Մ. Մ.

# Պետք չէ իրար խառնվել

Ապրիլի 13-ին, Էջմիածին քաղաքում ընտրողների հանդիպման ժամանակ ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը բեմի վրա ծնկել էր՝ ձեռքով բարեւելու եւ ընտրողներից նամակներ վերցնելու, ու նրա գոտու տակ զենքի նման ինչ-որ բան էր երեւացել: Ավելի ուշ Գ. Ծառուկյանը լրագրողների ճշտմանն ի պատասխան՝ նշել էր, թե դա «Վերտու» հեռախոսն է եղել: Երեկ քաղաքագետների միությունում լրագրողները ԲՀԿ համամասնական ցուցակի երկրորդ համար Վարդան Օսկանյանից հետաքրքրվեցին նրա տեսակետով՝ այդ փաստի մասին. «Չեմ ուզում դա մեկնաբանել: Կարծում եմ, որ դրանից մեծ բան իսկապես պետք չէ սարքել: Եթե Հայաստանում օրինական զենք կրելու իրավունք ունես, դա քո իրավունքն է: Այնպես որ, պարոն Ծառուկյանի որոշումն է եղել՝ այդ օրն այդպես գնալու ընտրարշավի»: Լրագրողները ճշտեցին՝ այդուհանդերձ զե՞նք է եղել. «Նկարներից դատելով՝ ինչ որ ես տեսա, կարծում եմ՝ զենք էր», ասաց Օսկանյանը՝ դրա մեջ մեծ բան չտեսնելով: Ահա այս հարցազրույցից երեկ մի ողջ պատմություն ծավալվեց վիրտուալ ԶԼՄ-ներում, թե Օսկանյանը հայտարարել է՝ այո, զենք է եղել, եւ այլն: Իսկ թե ինչո՞ւ է Վ. Օսկանյանի կարծիքը տարբեր Ծառուկյանի բացատրածից՝ ԲՀԿ առաջնորդի մամուլի խոսնակ Խաչիկ Գալստյանը կայքերից մեկին ի պատասխան նշել է, թե ամեն ինչ նորմալ է, եւ պետք չէ իրար խառնվել:

Մ. Խ.

# Ռեկտորն ու նախարարը ...

*1-ին էջից*

**Ջոլյանը հերքեց խոսակցությունները, որ կրթության ոլորտի երկու ներկայացուցիչների միջեւ սեւ կատու է անցել ֆինանսական խնդիրների պատճառով: «Նման բան չկա: Չեմ ուզում անձնավորել, ոչ էլ քաղաքականացնել, բայց այդ նպատակաուղղվածությունը ցույց է տալիս, որ միտումներ կան, թեեւ չեմ ուզում ենթադրություններ անել: Այս գործելաոճով նախարարն աշխատում է իր կուսակցության դեմ, քանի որ վնաս է հասցնում կուսակցությանը հենց նախընտրական շրջանում: Իսկ թե ինչու է շտապում հեռացնել ինձ մինչ ընտրությունները, երեւի վստահ չէ, որ ընտրություններից հետո նույն պաշտոնում կլինի», ասաց Ջոլյանը՝ հավելելով, որ Աշոտյանին առաջարկել է դադարեցնել խոսակցությունները մինչեւ ընտրությունների ավարտը, սակայն Աշոտյանը հրաժարվել է:**

**Թեպետ երեկվանից ուժի մեջ է մտել նախարարի որոշումը, համաձայն որի ԵՊԼՀ ռեկտորն ազատված է պարտականություններից, իսկ պաշտոնակատար նշանակվել է պրոռեկտոր Գաբրիել Բալայանը, Ջոլյանը հայտարարեց, որ շարունակում է կատարել ռեկտորի պարտականությունները, քանի որ դրանք դադարեցնելու որոշումը հակաօրինական է եւ հարցը բողոքարկելու է դատարանում: Ի դեպ, Աշոտյանի հետ ունեցած կոնֆլիկտի հետեւանքով ռեկտորը չեղյալ է հայտարարել մասնակցությունը Գերմանիայում «Բազմալեզվությունը հասարակությունում, աշխատաշուկան եւ քաղաքականությունը: Դասավանդման նոր մարտահրավերները բարձրագույն ուսումնական հաստատություններում» խորագրով երկօրյա գիտաժողովին:**

**«Սուրեն Ջոլյանին աշխատանքից հեռացման հարցում միայն իրավական հիմք կա, իսկ այլ տեսակի շահարկումներն անթույլատրելի են»: Սա էլ նախարար Աշոտյանի պատասխանն է: Նա հավելել է, որ անհրաժեշտության դեպքում պատրաստ են դատարանում ներկայացնել բոլոր հիմնավորումներն ու փաստարկները:**

**Աշոտյանի գնահատմամբ՝ այլ եղանակով որոշումը բեկանելու փորձերը հակաիրավական են, իսկ դասախոսներին եւ ուսանողներին որպես վահան օգտագործելն՝ անազնիվ: «Բացարձակ քաղաքական տրամաբանություն չկա: Եթե լինեին քաղաքական էլեմենտներ, ապա կփորձեի գործընթացը տեղափոխել ընտրություններից հետո», ասաց նախարարը: Կատարվածի առնչությամբ քաղաքական ենթատեքստ չի տեսնում նաեւ վարչապետ Տիգրան Սարգսյանը: Նա վստահ է, որ Աշոտյանը գործել է օրենքի սահմանում, իսկ եթե ոչ՝ հարցը կքննարկվի օրինական դաշտում:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Մայիսի 6-ի ընտրությունները՝ թեստ Հայաստանի համար

## *Եվրոխորհրդարանը կոչ է արել ԵՄ երկրներին՝ «չզինել» Հայաստանն ու Ադրբեջանը*

Եվրոխորհրդարանը երեկ Ստրասբուրգում իր հերթական նիստում քննարկել եւ ընդունել է բանաձեւ ԵՄ-Հայաստան ասոցացման պայմանագրի առնչությամբ, միեւնույն ժամանակ մեկ այլ բանաձեւով անդրադառնալով նաեւ Ադրբեջանի հետ նույն փաստաթղթի բանակցություններին ընթացքին:

ԵԽ հաղորդագրության համաձայն, բանաձեւերում նշվում է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի հետ ԵՄ-ի կողմից բանակցվող ասոցացման համաձայնագրերը (Հայաստանի հետ համաձայնեցվել է համաձայնագրի 28 գլխից 24-ը, Ադրբեջանի հետ՝ 28 գլխից 13-ը) պետք է տարածաշրջանն առավել ապահով դարձնեն՝ խրախուսելով ինչպես ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը, այնպես էլ ԵՄ աջակցությունը պայմանավորելով Հայաստանում եւ Ադրբեջանում մարդու իրավունքների պահպանությամբ եւ ժողովրդավարական բարեփոխումներով:

Եվրոխորհրդարանի բանաձեւերը, որ Հայաստանի դեպքում ընդունվել են 508 կողմ, 29 դեմ եւ 27 ձեռնպահ քվեարկությամբ, իսկ Ադրբեջանի դեպքում՝ համապատասխանաբար 520, 32 եւ 24 ձայների բաշխվածությամբ, Եվրոպայի խորհրդին եւ Եվրոհանձնաժողովին առաջարկություններ են ներկայացնում՝ հաշվի առնելու համաձայնագրերի բանակցային գործընթացում:

Ադրբեջանի դեպքում բանաձեւը, մասնավորապես, դրական է գնահատում էներգետիկ համագործակցությունը, սակայն նշում է, որ «Եվրատեսիլի» անցկացումը Բաքվում չպետք է զուգակցվի մարդու իրավունքների խախտումներով, իրավապաշտպանների հետապնդմամբ: Ադրբեջանի հարցով զեկուցող **Աննելի Ջաաթինմակին** քննարկումների ընթացքում հայտարարել է, որ Եվրոխորհրդարանը պետք է հաշվի առնի Ադրբեջանում մարդու իրավունքների առնչությամբ առկա թերություններն ու բացթողումները: «Մարդիկ են ձերբակալվում, նրանց տները խուզարկվում են», նշել է զեկուցողը:

Հայաստանի առնչությամբ բանաձեւը դրական է գնահատում արդարադատության, ազատության, անվտանգության եւ միգրացիոն հարցերում ԵՄ ստանդարտներին համապատասխանելու Հայաստանի ջանքերը, միեւնույն ժամանակ շեշտադրելով մայիսին կայանալիք ընտրությունների արդար եւ ազատ անցկացման ապահովման կարեւորությունը:

Բանաձեւում նաեւ հիշատակում կա 2008-ի մարտյան դեպքերի մասին, հիշեցնելով, որ Հայաստանը դեռեւս պետք է ապահովի մարտիմեկյան իրադարձությունների թափանցիկ եւ անկողմնակալ հետաքննությունը:

Ըստ Հայաստանի հարցով զեկուցող Թոմազ Պյոտր Պորեբայի խոսքերի՝ մայիսի 6-ի ընտրությունները «թեստ կլինեն Հայաստանի համար՝ ԵՄ հետ լավ հարաբերություններ հաստատելու կողմնորոշման առումով»: «Եթե դրանք լինեն ազատ եւ արդար, եւ կարծում եմ՝ կլինեն, դա կցուցադրի, որ Հայաստանը լրջորեն հավատարիմ է իր պարտավորություններին», նշել է Պորեբան:

Ղարաբաղյան հարցի առնչությամբ ԵԽ պատգամավորները երկու կողմերին կոչ են արել մեղմել սեփական հայտարարությունների հնչերանգներն ու ճանապարհ հարթել իրական երկխոսության համար, միեւնույն ժամանակ Հայաստանի եւ Ադրբեջանի վերաբերյալ բանաձեւերում դատապարտելով «տարածաշրջանի սպառազինումն ու ռազմական բարձր ծախսերը»: Բանաձեւերը ԵՄ անդամ երկրներին կոչ են անում դադարեցնել զենքի եւ զինամթերքի մատակարարումը երկու երկրներին:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Նայիր արմատին

Ադրբեջանական ֆիլմերի «փառատոնի» մասին մամուլում մի շարք հրապարակումներ եղան: Գրեցին եւ գրում են նաեւ Բաքվի թերթերը, ինտերնետ-ռեսուրսները: «Ինչի՞ն են դեմ ցուցարարները, ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորմա՞նը, հայերի եւ ադրբեջանցիների միջեւ նորմալ մարդկային հարաբերությունների հաստատմա՞նը»,- հռետորական հարց էր հնչեցրել, մասնավորապես «Հրապարակ»-ը: Իսկ Բաքվի «Էխոն» այլ հարցով էր վերնագրել սեփական դատողությունները՝ «ինչո՞վ են հայաստանյան իշխանություններին վախեցրել ադրբեջանական ֆիլմերը»:

Գուցե զուտ պատահականություն է, որ երկու թերթերն էլ հարցադրումներ են արել գրեթե նույն իմաստով: «Հրապարակը» դժգոհում է, թե ինչո՞ւ «փառատոնը» չկայացավ, իսկ «Էխո»-ն՝ «մեկնաբանում»: Ըստ որում, դա անում է նկատելի հաճույքով: Տպավորությունն այն է, որ եթե Գեորգի Վանյանի նախաձեռնությունը հաջողությամբ պսակվեր, ապա Ադրբեջանում կտխրեին: Բնական է, չէ՞ որ այդ դեպքում «գնդակը կհայտնվեր իրենց դաշտում»: Թերեւս «Հրապարակն» էլ ցանկացել է ասել. «Ինչո՞ւ այնպես չարեցինք, որ ադրբեջանական կողմն ամոթով մնա»:

Առաջին հայացքից ամեն ինչ տրամաբանական է թվում. Հայաստանում կազմակերպվում է ադրբեջանական ֆիլմերի «փառատոն», Ադրբեջանում հայտնվում է իրենց «Գեորգի Վանյանը», ցուցադրվում են հայկական ֆիլմեր, եւ մշակութային երկխոսությունն սկսվում է»: Հովանավորներն էլ «հաշվետվություն են ներկայացնում իրենց կառավարություններին, վերջիններս էլ ավելի մեծ միջոցներ են հատկացնում՝ ընդլայնելու վստահության մթնոլորտը»:

Արտառոցն այն է, որ երկկողմ, թող որ զուտ մարդկային, շփումներում «արմատական բեկում մտցնելու» գործը հովանավորները վստահել են հայ հասարակությանը գրեթե անծանոթ, երբեք հրապարակային գործունեություն չծավալած մարդու՝ Գեորգի Վանյանին: Ղարաբաղյան կարգավորման բանակցությունների միջազգային միջնորդները մեկ անգամ չէ, որ ընդգծել են, թե «կողմերի առաջնորդները պետք է ունենան հասարակության վստահությունը»: Իսկ Գեորգի Վանյանը չպե՞տք է վայելի հասարակության վստահությունը: Գոնե չպե՞տք է աշխատեր, որպեսզի հասարակության որոշակի խավերի վստահությունն ունենար:

Անդրադառնալով Վանյանի նախաձեռնության տապալմանը, քաղաքագետ Զարդուշտ Ալիզադեն ասել է, թե իր բնակարանում կկազմակերպի «հայկական ֆիլմերի ցուցադրում»: Դա հնարավոր է: Բայց դրանից ոչինչ չի փոխվի: Ինչպես ոչինչ չէր փոխվի, եթե Գյումրիի «Աստարեզ» ակումբում մի քանի հոգի դիտեին Վանյանի ընտրած ադրբեջանական ֆիլմերը: Խնդիր չէ նույնիսկ Երեւանում ցուցադրել ադրբեջանական «Իմ յոթ որդիները», Բաքվում՝ «Եռանկյունի» ֆիլմը:

Մշակութային երկխոսություն սկսելու համար հարկ է նախաձեռնել կողմերի ստեղծագործական ուժերի համատեղ աշխատանք որեւէ նախագծի շուրջը: Ասենք՝ ընտրել 1905-06թթ. ժամանակաշրջանը: Հովհաննես Թումանյանի խաղաղարար գործունեությունը Լոռիում եւ Զաբարլիի «1905 թվականը» պիեսը: Միավորել, գրել միասնական սցենար եւ նկարահանել մի հրաշալի ֆիլմ: Վերջերս «բաց նամակներ» փոխանակեցին Սոս Սարգսյանը եւ Ռուստամ Իբրահիմբեկովը: Ահա, Ռուստամ Իբրահիմբեկովը դրամատուրգ-սցենարիստ է, Սոս Սարգսյանը՝ դերասան: Եվ թող Թումանյանի անձնական, Ջաբարլիի գեղարվեստական փորձի հիման վրա ստեղծագործական երկխոսություն նախաձեռնեն, հայ-ադրբեջանական «1905-06 թվականներ» ֆիլմ նկարահանելու խնդիր թող քննարկեն: Ոչ ոք դեմ չի լինի: Կարծում եմ՝ նաեւ Ադրբեջանում:

Իսկ Գեորգի Վանյանը պարզապես հեղինակազրկել է մշակութային երկխոսության գաղափարը: Եվ, թող սասանայություն չթվա, տպավորությունն այն է, որ դա արվել է կանխամտածված: Կամ, առնվազն, ստացվել է այնպես, որ «Էխո»-ի մեկնաբանը գրի, թե «խաղաղարար նախաձեռնությունները որեւէ արժեք չունեն, եթե եվրոչինովնիկները չեն ուզում պարզել, ո՞վ է առաջինը հարձակվել, ո՞ւմ հողերն են օկուպացված»:

Խաղաղության եւ բարիդրացիության հաստատման համար իմաստ չունի «դատական ատյան» հրավիրել: Մանավանդ որ հայկական կողմերն էլ շատ մեծ հաջողությամբ կարող են ապացուցել, թե իրականում ով է առաջինն սկսել պատերազմը, եւ ում պատմական հայրենիքի մեծագույն մասն է գտնվում մյուսի վերահսկողության տակ: Երկխոսությունը չպետք է շփոթել բանավեճի հետ: Հատկապես՝ արտաքաղաքական հարթությունում: Իսկ մշակույթի քաղաքականացումը պարզապես հիմարություն է:

Վ. Ա.



# ՄԱԳԱՏԷ. Հայաստանի հետ միջուկային անվտանգության բնագավառում գործակցությունը արդյունավետ է




Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը** երեկ ընդունել է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ՄԱԳԱՏԷ) տնօրեն **Յուկիյա Ամանոյին**: Ըստ ԱԳՆ հաղորդագրության՝ Նալբանդյանը հանդիպմանն ընդգծել է, որ Հայաստանը մեծ կարեւորություն է տալիս ԱԷՄԳ-ի հետ հարաբերությունների եւ համագործակցության զարգացմանը՝ այն դիտարկելով նաեւ որպես Հայաստանի էներգետիկ եւ միջուկային անվտանգության կարեւորագույն բաղադրիչ:

Զրույցի ընթացքում Նալբանդյանն ու Ամանոն անդրադարձել են նաեւ Հայաստանի եւ ԱԷՄԳ-ի համագործակցությանը՝ Մեծամորի ատոմակայանի, ինչպես նաեւ Հայաստանում նոր ատոմակայանի կառուցման, միջուկային անվտանգությանն առնչվող հարցերին: Յուկիյա Ամանոն իր հերթին նշել է, որ ԱԷՄԳ-ն կարեւորում է համագործակցությունը Հայաստանի հետ միջուկային անվտանգության բնագավառում եւ այն բավականին արդյունավետ է:

Այսօրինակ գնահատականը բավականին կարեւոր ու ծանրակշիռ է՝ հաշվի առնելով, թե Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից ինչպիսի շահարկումներում են օգտագործվում Հայաստանում ատոմակայանի առկայությունն ու նորի կառուցման նախագիծը:

Ա. Հ.

# Մահացել է հոլանդացի նշանավոր հայերենագետը



Նիդերլանդներում ապրիլի 14-ին վախճանվել է հոլանդացի նշանավոր հայերենագետ, Լեյդենի համալսարանի պրոֆեսոր **Ջոզեֆ Յոհանես Վայտենբերգը**:

Նա ծնվել էր 1943 թվին, եղել է Լեյդենի համալսարանի հայոց լեզվի ամբիոնի առաջին ու վերջին ղեկավարը: Հայերենագիտության մեջ պրոֆեսոր Վայտենբերգն ունի իր ավանդը. գրել է մի շարք մենագրություններ ու բազմաթիվ հոդվածներ, կազմակերպել է գիտաժողովներ, ստեղծել հայագիտական իր նշանավոր բազան:

Հայերենագետ Վայտենբերգի հուղարկավորությունը տեղի կունենա ապրիլի 20-ին:

Ի. Պ.

# Ադրբեջանն Իսրայելի հետ մերձեցմամբ առնվազն զինվում է

*1-ին էջից*

Միեւնույն ժամանակ գնահատականներ են հնչում, թե Ադրբեջանը ոչ միայն օժանդակում է Իրանի դեմ գործողություններին, ինչի համար էլ արժանանում է Իրանի քննադատությանն ու նոտաներին, այլեւ փորձում է նախապատրաստել հարձակում Արցախի վրա, որի համար նպաստավոր իրավիճակ կստեղծվի Իրանի վրա հարձակման պարագայում: Ամեն դեպքում, Ադրբեջանի նախագահի՝ կառավարության նիստում վերջին ելույթն էլ այնպիսի առատությամբ էր մեջբերումներ ներկայացնում երկրի ռազմական բյուջեի մեծացման, նոր սպառազինությունների ձեռքբերման ու «օկուպացվածը զենքով հետ բերելու» մասին, որ տարածաշրջանի թեժանալու հավանականությունը կարելի է մեծ համարել, հատկապես երբ Իսրայելը փորձում է ամեն գնով Իրանի դեմ պատերազմ հրահրել:

Վերջին նպատակին էլ կարող է ծառայել նաեւ այն փաստը, որ թեեւ Ադրբեջանն Իսրայելում դեսպանատուն չունի, սակայն առեւտրային ներկայացուցչություն արդեն բացել է, եւ սա, ի դեպ, Ադրբեջանի մեծ եղբոր՝ Թուրքիայի հետ Իսրայելի բավականին սառը հարաբերությունների պայմաններում: Այսօրինակ ներկայացուցչությունը, հաշվի առնելով Ադրբեջան-Իսրայել վերջին առեւտրային գործարքը՝ 1.6 մլրդ դոլարի սպառազինությունների տեսքով, կարող է նպաստել Ադրբեջանի առավել սպառազինմանը, եւ դա այն դեպքում, երբ ամերիկյան փորձագիտական շրջանակները բոլոր հնարավոր տարբերակներով փորձում են տեղ հասցնել, որ Իրանի վրա հարձակվելու Իսրայելի ցանկությունը կարող է կործանել նաեւ Միացյալ Նահանգները:

Ամեն դեպքում, այս ամենում որպես գործիք օգտագործվող Ադրբեջանի ստացած հնարավոր դիվիդենտները կարող են բերել մի իրավիճակի, երբ հարեւանները կզինվեն մինչեւ ատամներն ու հնարավոր կհամարեն Արցախի գրավումը՝ արդեն անկախ Իրանի շուրջը տիրող իրավիճակից:

## Տեղեկատու

**Քաղաքացիական եւ սոցիալական զարգացման հիմնադրամը, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի աջակցությամբ ստեղծել է ՀՀ ԱԺ 2012 թ. ընտրություններին մասնակցող կուսակցությունների մասին պատմող մանրամասն ուղեցույց, որը երեկ ներկայացվեց հանրությանը: ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավար Կարել Հոֆստրան գրքի շնորհանդեսում նշեց, թե սա մի գիրք է, որով կարելի է հետեւել՝ որքանո՞վ են նախընտրական ժամանակաշրջանում հնչած խոստումները հետագայում իրականություն դառնում: Իսկ ԱՄՆ ՄԶԳ գրասենյակի ղեկավար Սթիվեն Բրեգերն իր խոսքում զգուշացրեց՝ հետագայում ԱԺ մտած պատգամավորների պահվածքը պետք է համապատասխանի այս գրքում հայտնված դիրքորոշումներին:**

**Մենք էլ, օգտվելով միատեղ հավաքված տեղեկատվությունից, դրանցից հետաքրքրականները ներկայացնենք մեր ընթերցողին այդ գրքից:**

2004-ին հիմնադրված «Բարգավաճ Հայաստանի» մասին նշվում է, թե 59 տարածքային կառույց, 209 անդամով քաղխորհուրդ եւ ներկա Ազգային ժողովում 29 պատգամավոր ունի այս կուսակցությունը, սակայն չի նշված անդամների թիվը՝ հավանաբար ԲՀԿ-ում դա պետական գաղտնիք են համարել եւ չեն հայտնել հարցախույզ անողներին:

Որպես ԲՀԿ գաղափարախոսություն նշված է՝ «ստեղծվել է ժողովրդին ծառայելու, նրա համար արժանապատիվ կյանք ապահովելու եւ հայրենիքի բարգավաճմանն իր նպաստը բերելու նպատակով»: Երկրի խնդիրների լուծումն այս կուսակցությունը հնարավոր է համարում քաղաքացիական համաձայնության ու համերաշխության պարագայում եւ այս դիրքերից էլ հանդես է գալիս: Կուսակցության տեսակը նշված է «կենտրոնամետ»:

2002 թվականին հիմնադրված եւ 43 տարածքային ստորաբաժանում ունեցող (առաջին նախընտրական ասուլիսին ավելի մեծ թիվ է նշվել) «Ժառանգությունը» հարցաթերթիկի լրացման ժամանակ 6450 անդամ է ունեցել, որոնցից 43 տոկոսը կանայք են, 30 տոկոսը՝ երիտասարդներ, Ազգային ժողովում ներկայացված է 7 պատգամավորով: 11 անդամից բաղկացած վարչություն, 41 անդամով խորհուրդ ունի: Որպես գաղափարախոսություն նշված է՝ «արմատներով ազգային, տնտեսական ուղեգծով՝ ազատական, կառավարման ժողովրդավարական համակարգի կողմնակից»: «Կուսակցության տեսակը» կետի դիմաց նշված է «ազգային-ազատական, աջակողմյան-կենտրոն»:

ՀԱԿ-ը բնականաբար ներկայացված է իր կազմի կուսակցությունների մասին պատմությամբ. 2641 անդամ ունեցող «Ազատություն» կուսակցություն, 4874 անդամ ունեցող «Ժողովրդավարական հայրենիք» անունը մոռացված այս կուսակցությունը 4875 անդամ ունեցող «Ժողովրդավարական ուղի» (նրա նախկին ղեկավար Մանուկ Գասպարյանի մահից հետո այս կուսակցության անունը եւս մոռացվածների թվում է), այնպես որ թիվն էլի զարմանալի է: Հայաստանի ժողովրդական կուսակցություն (ՀԺԿ)՝ հարցման պահին 23400 անդամ է ունեցել, կանայք 40 տոկոսն են, երիտասարդները՝ 35 տոկոս: Ներկա ԱԺ-ում պատգամավոր չունի, 81 հոգուց կազմված վարչություն ունի: Որպես գաղափարախոսություն նշված է «ժողովրդավարական, ժողովրդական սոցիալիզմի գաղափարներ կրող» (անգամ ես գլխի չէի ընկնի, որ ՀԺԿ-ն սոցիալիստ է): Կուսակցության տեսակը նշված է «կենտրոնամետ»: ՀԱԿ անդամ Հայաստանի լիբերալ կուսակցությունը նույնպես ցույց է տվել 4123 անդամ, չնայած երբ լարում ես հիշողությունդ՝ նրա ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանից բացի էլ ուրիշ լիբերալ չես հիշում տվյալ կուսակցությունից: 9 անդամից բաղկացած քաղաքական խորհուրդ ունի (սա եւս ցույց է տալիս, որ իրականում քչաթիվ կուսակցության հետ գործ ունենք), ազատական գաղափարներ կրող է, կուսակցության տեսակն էլ նշված է «ազատական»:

ՀԱԿ անդամ Հայաստանի կանաչների կուսակցություն էլ կա՝ 2300 անդամով, որի 61 տոկոսը կանայք են, ցիալիստական, ժողովրդավարական եւ հեղափոխական գաղափարախոսությամբ կուսակցություն է, բայց այս բնորոշիչներից առաջ գրված է «ազատ, անկախ եւ միացյալ Հայաստանի կերտում» նպատակը: Իսկ կուսակցության տեսակի դիմաց նշված է՝ «ազգային եւ սոցիալիստական»:

Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը՝ ՀԴԿ-ն, գրանցված է 1991 թվականից, 3700 անդամ է ցույց տվել, 27 տարածքային ստորաբաժանում, դավանում է սոցիալ-դեմոկրատական գաղափարներ՝ «դեմոկրատական սոցիալիզմի հայկական մոդել» իր ծրագրով: Կոմկուսը ցույց է տվել 19730 անդամ, 14 անդամ ունեցող բյուրո, եւ 81 անդամ ունեցող պլենումով, որպես գաղափարախոսություն նշել է մարքսիսմ-լենինիզմի դրույթների ստեղծագործաբար իրականացումը, տեսակը՝ «ձախակողմյան»:

# Կուսակցականներ՝ վիրտուա՞լ, թե՞ իրական



ՀՀԿ-ի հիմնադրման տարեթիվը 1990 թվականն է, Հանրապետականի կազմում 150 հազար անդամ է նշված, որից 51 տոկոսը կանայք են, 26 տոկոսը՝ երիտասարդները: 142 անդամանոց խորհուրդ, 19 հոգանոց գործադիր մարմին, 103 տարածքային ստորաբաժանում ունի: Գաղափարախոսությունը ազգային է, Նժդեհի ուսմունքով համեմված, հայոց արժեհամակարգի եւ պատմամշակութային փորձի զուգակցմամբ: Տեսակով՝ ազգային-պահպանողական:

«Միավորված հայեր» կուսակցության անդամների թիվը 4364 է եղել հարցաթերթիկը լրացնելու պահին, 32 անդամով քաղխորհուրդ, 15 անդամ ունեցող վարչություն ունի, ազգային գաղափարախոսության կրող է, տեսակը նշված է՝ «ազգային-հայրենասիրական, կենտրոնաձիգ, հզոր եւ կայուն պետականության կողմնակից երրորդ ուժ»:

1997 թվականին ստեղծված ՕԵԿ-ը լրացման պահին 150 հազար անդամ է ցույց տվել, 60 տոկոսը կանայք են, 30 տոկոսը՝ երիտասարդներ, Ազգային ժողովում 8 պատգամավոր ունի, 350 տարածքային ստորաբաժանում: Գաղափարախոսությունը՝ «մարդը, նրա ազատությունն ու իրավունքները, ազգային էությունն ու նրա արժեւորումը, մրցունակ եւ հեղինակություն վայելող երկրի կառուցումը»: Իսկ տեսակը՝ գրված է «լիբերալ»:

ՀՅԴ-ն, ազգային եւ համամարդկային գնահատման եւ յուրացման գաղափարախոսությամբ: ՀՀՇ-ն հարցաթերթիկը լրացնելու պահին 7750 անդամ է ցույց տվել (էս երկրում դեռ այդքան ՀՀՇ-ակա՞ն է մնացել), որի 32 տոկոսը կանայք են, 21 տոկոսը երիտասարդություն: ՀՀՇ խորհուրդը 72 անդամից է կազմված, վարչությունը՝ 29 անդամից: Ազատական գաղափարախոսությամբ կուսակցություն է, կուսակցության տեսակը նշված է «ազատական-ժողովրդավարական»: ՀԱԿ կազմում նաեւ «Հայոց հայրենիք» կուսակցություն կա, որի անունը ոչ մի բան չի ասում, սակայն, պատկերացրեք, նրա կազմում 18825 մարդ կա («շատ ընկնիքիչ չլնի»), գաղափարախոսությունն էլ՝ «ազգային, ձախամետ-պահպանողական» է նշված: Փաստորեն այս չլսված-չտեսնված կուսակցությունում 3,5 անգամ ավելի մարդ կա, քան Արամ Զավենի Սարգսյանի «Հանրապետություն» կուսակցությունում, որի անդամների թիվը հարցաթերթիկը լրացնելու պահին եղել է 5500: «Հանրապետությունը» 11 անդամից կազմված քաղաքական խորհուրդ ունի, «մարդու իրավունքների եւ ազատությունների գերակայությամբ Հայաստանի զարգացում գաղափարախոսությամբ, տեսակով՝ պահպանողական»: Իսկ բուն՝ Պահպանողական կուսակցությունը, լավ է, համեստ թիվ է ցույց տվել՝ 2700, գաղափարախոսության եւ տեսակի առումով էլ՝ ամեն ինչ պարզ է:

Ավարտենք ՀԱԿ-ի կազմի նկարագիրը, որն ըստ կուսակցականների թվի ներառում է այսքան մարդ, սակայն անգամ իր կազմի կուսակցությունների ընդհանուր 66 604 կուսակցականների 10 տոկոսն էլ չի գալիս ՀԱԿ հանրահավաք կամ նախընտրական հանդիպման փաստորեն. հիմա այդ թիվը վիրտուա՞լ է, միայն թղթի՞ վրա:

ՀՅԴ-ն 16 պատգամավոր ունի ներկա խորհրդարանում, հարցաթերթիկի լրացման պահին 6785 անդամ է ունեցել, 13 տոկոս կանայք (սա, երեւում է, տղամարդկանց կուսակցություն է), 9 անդամ ունեցող գերագույն մարմին: Ազգային, սոցիալիստական, ժողովրդավարական եւ հեղափոխական գաղափարախոսությամբ կուսակցություն է, բայց այս բնորոշիչներից առաջ գրված է «ազատ, անկախ եւ միացյալ Հայաստանի կերտում» նպատակը:

Ընդհանուր թվով համամասնական կարգով ընտրությունների մասնակից կուսակցականների թիվը 407 663 է, եթե սրան գումարենք մի 300 հազ. ԲՀԿ-ական, կստացվի 750 հազարից ավելի, օ, սարսափ, այսքան ընտրության սուբյեկտ կուսակցական կա՞ Հայաստանում, որոնցից համամասնական կարգով ընդհանուր թվով առաջադրվել են 1026 մարդ:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**



# Աղետի գոտում շինարարության ծավալներն աննախադեպ են

## *Մինչեւ 2013-ը բնակարան կունենան բոլոր 7000 անօթեւանները*

Աղետի գոտում դեռեւս անօթեւան մնացած ընտանիքներին բնակարաններով ապահովելու նպատակ ունի 2008-2012-ի պետական աջակցությամբ իրականացվող ծրագիրը: Դրանով պետությունը պարտավորվել է աղետի գոտու բնակավայրերում, համայնքների ղեկավարների կողմից հաստատված ցուցակներում հաշվառված մոտ 7000 ընտանիքների բնակարանային խնդիրները լուծել մինչեւ 2013 թվականի հունվարի 1-ը:

Թե ինչպե՞ս է ընթանում այդ ծրագիրը եւ ի՞նչ աշխատանքներ են սպասվում այս տարվա ընթացքում, ներկայացվեց կառավարության վերջին նիստերից մեկում: Նկատի ունենալով, որ այս հարցն առնչվում է հազարավոր մարդկանց ամենակենսական խնդիրներից մեկին՝ բնակարան ունենալուն, անդրադառնանք վերոնշյալ ծրագրի հիմնական մանրամասներին:

Նշենք, որ աղետի գոտում բնակարանաշինության նպատակով կառավարությունը հատկացրել է Ռուսաստանի Դաշնությունից ստացված վարկային միջոցների մի մասը՝ 250 մլն դոլար կամ 92,5 մլրդ դրամ: 2012 -ի տարեվերջին ծրագրի իրականացման համար հատկացված ընդհանուր գումարը կկազմի ավելի քան 84 մլրդ դրամ, իսկ կառուցված բնակարանների (բնակելի տների) ընդհանուր թիվը՝ 4617:

Բնակարանային շինարարության ծրագրի իրականացման համար 2008-ին հայտարարվեցին մրցույթներ: Մրցութային փաթեթներում որպես հիմնական պահանջ էր նախատեսված, որ մրցույթում հաղթող ճանաչվող շինարարական կազմակերպությունը աշխատանքները պետք է իրականացնի սեփական միջոցների հաշվին, ինչի դիմաց վճարումները (մինչեւ 2018 թվականը) կկատարվեն պետական վարկային միջոցների հաշվին: Այդ պայմաններով հայտարարված մրցույթին մասնակցության համար հայտ էր ներկայացրել միայն «Գլենդել Հիլզ» ընկերությունը, որի հետ էլ կնքվեցին պայմանագրեր:

Բնակարանային շինարարության ծրագիրը սկսվեց 2009 թվականին: Անցած երեք տարիների ընթացքում «Գլենդել Հիլզ» ընկերությունը (որն ունի մոտ 80 մլրդ դրամի պայմանագրեր) պետության հատկացրած 78,8 մլրդ դրամով Շիրակի եւ Լոռու մարզերում (Գյումրի, Սպիտակ, Լոռու մարզի 14 գյուղական համայնքներ) արդեն կառուցել է 1747 բնակարան՝ 363531 քմ ընդհանուր մակերեսով: Միաժամանակ, կառուցման փուլում է 2290 բնակարան (բնակելի տուն)՝ 224999 քմ ընդհանուր մակերեսով Գյումրիում, Ախուրյանում, Լոռու մարզի գյուղական համայնքներում:

Բացի դրանից, 2012-ին Շիրակի եւ Լոռու մարզերի գյուղական բնակավայրերում 39139 քմ ընդհանուր մակերեսով ընկերությունը պետք է կառուցվի եւս 423 բնակարան (բնակելի տուն):

1,2 մլրդ դրամ միջոցներով Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում 2010-ին շահագործման են հանձնվել 4 բազմաբնակարան շենքեր՝ 56 բնակարանների կառուցման, իսկ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում 40 բնակարաններից բաղկացած 1 բազմաբնակարան շենքի վերականգնման աշխատանքները կավարտվեն այս տարի: 3,6 մլրդ դրամ էլ կառավարությունը հատկացրել է ԲԳՎ (բնակարանների գնման վկայագրերի) ծրագրի համար:

Փաստորեն, պետական աջակցությամբ բնակարաններով ապահովման ծրագրի շահառու հանդիսացող 6583 ընտանիքներից 1796 ընտանիքների բնակարանային խնդիրն արդեն իսկ լուծվել է, 2759 ընտանիքներինը կլուծվի 2012-ին, իսկ 1020 ընտանիքներ տարբեր պատճառներով (ծրագրի չափանիշներին չհամապատասխանելու, մահվան կամ ամբողջ կազմով հանրապետությունից երկարատեւ բացակայելու կապակցությամբ) չեն ճանաչվել կամ չեն ճանաչվի ծրագրի շահառու:

Ծրագրի իրականացումից հետո, սակայն, դեռեւս 1008 ընտանիքների բնակարանային խնդիրները կմնան չլուծված: Դրան մի մասի՝ Շիրակի, Լոռու եւ Արագածոտնի մարզերի գյուղական համայնքներում մեկսենյականոցի հավակնող 400 ընտանիքի բնակարանի խնդիրը կառավարությունը նախատեսում է լուծել ԲԳՎ ծրագրի միջոցով: Բանն այն է, որ մեկսենյականոց բնակելի տները կառուցումը տնտեսապես արդյունավետ չէ, հետեւաբար դրանք ստանալու հավակնություն ունեցողների խնդիրը նպատակահարմար է լուծել ԲԳՎ-ի միջոցով, այսինքն ֆինանսական աջակցության տրամադրմամբ: Իսկ մնացած 608 ընտանիքի խնդիրը կլուծվի բնակարանային շինարարության ծրագրով, ինչը եւ տնտեսապես է նպատակահարմար, եւ շահառուներին է շահավետ: Այդ նպատակով լրացուցիչ 1,5 մլրդ դրամի անհրաժեշտություն է առաջացել, ինչի արդյունքում ծրագրի ամբողջական արժեքը կկազմի 85,5 մլրդ դրամ:

Աղետի գոտու բնակավայրերում շինարարական աշխատանքների իրականացմանն ուղղված միջոցների հաշվին ակնկալվում է մինչեւ 2013 թվականը ավարտել 403570 քմ մակերեսով 4460 բնակարանների (բնակելի տների) շինարարական աշխատանքները, ինչը պակաս է կնքված պայմանագրերով ամրագրված շինարարության ընդհանուր մակերեսից 49365 քառ. մետրով եւ 943 բնակարաններով:

Խոսելով աղետի գոտում պետական միջոցներով իրականացվող շինարարական աշխատանքների մասին, հարկ է ընդգծել ոչ միայն դրանց կարեւորությունը Հայաստանի այս տարածքի՝ ավելի քան 20 տարի անօթեւան մնացած բնակիչների համար, այլ նաեւ դրանց մեծ ծավալները, որոնք աննախադեպ են մեր երկրի հետխորհրդային ժամանակաշրջանի համար:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Չարիքի կայսրություն

***Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում ռուս լրագրող-գրող Պյոտր Բոլոգովի «Օսմանյան կայսրության ժառանգության մասին» հոդվածը թարգմանաբար:***

«Ապրիլի սկզբին Եգիպտոսում 93 տարեկան հասակում մահացավ պատմության մեջ ամենահզոր կայսրություններից մեկի թագավորող տան վերջին ներկայացուցիչը՝ Ֆաթմա Նազլիշահ Օսմանօղլու Սուլթանը: Նրա նախնիները՝ օսմանները 14-րդ դարից մինչեւ 20-րդ դար իրենց նվաճումների թափով եւ չարագործությունների դաժանությամբ սարսափ էին ներշնչում ողջ քաղաքակիրթ աշխարհին: Այդ չարի կայսրության վերջը ողորմելի էր. օսմանները այլասերվեցին եւ դարձան համաեվրոպական ծաղրանքի առարկա: Եվ եթե չլիներ Քեմալ Աթաթուրքի քաղաքական հանճարը, դժվար թե նրանց հաջողվեր փրկել, պահպանել իրենց նախկին տարածքի գոնե մի մասը, որն այսօր զբաղեցնում է բավականին բարեկեցիկ Թուրքիան:

Ասենք, ի՞նչ Թուրքիա, ի՞նչ թուրքեր: Մինչեւ 20-րդ դարի սկիզբը չկար ոչ Թուրքիա, ոչ էլ՝ թուրքեր: Ի սկզբանե եղել է միայն Փոքր Ասիայում սելջուկների կայլի ցեղի ժամանակներից դեռ մնացած Օսմանը: Համախմբելով շուրջը բազմաթիվ թուրքալեզու ցեղեր, որոնց անգութ մոնղոլական հրոսակախմբերը քշում էին դեպի արեւմուտք, Օսմանն ուժ ձեռք բերեց եւ սկսեց ճնշել խոր թմբիրի մեջ գտնվող Հռոմեական կայսրությանը, որն էլ հետագայում կոչվեց Բյուզանդիա: Հետզհետե գրավելով տարածքներ՝ արեւմուտքում՝ հույների, իսկ արեւելքում՝ մոնղոլների հողերը, Օսմանի ժառանգները 100 տարվա ընթացքում ստեղծեցին հզորագույն պետություն, որը, սկսած Բայազեդի թագավորությունից (վերջինիս ռազմական դասի մշակույթ ցուցադրեց Լենկ-Թեմուրը), սկսեց կլանել հարեւան պետությունները այնպիսի նախանձելի ախորժակով, որ նրան կնախանձեին Հռոմը տապալած բարբարոսների առաջնորդները:

Սերբիան, Բուլղարիան, Բյուզանդիան, Վալախիան, Տրապիզոնի կայսրությունը, Ակ-Կոյունլուն, մամլյուկների պետությունը Եգիպտոսում, Հունգարիան, Տրանսիլվանիան, Ռոդոսը, Կիպրոսը, Տրիպոլիտանիան, Ղրիմը, Արեւմտյան Անդրկովկասը՝ ահա երկրների եւ տարածքների այն ոչ լրիվ ցանկը, որոնց վրա օսմանները տարածել էին իրենց տիրապետությունը 16-րդ դարի կեսերին: Իսկ հետո կայսրությունը, այդպես էլ մնալով խոր եւ խուլ միջնադարում, սկսեց քայքայվել թթխմորի նման ավելի առաջադեմ հարեւանների հարվածների տակ: Եվ այդ քայքայումը ձգվեց 300 տարի, առիթ տալով 19-րդ դարի կեսերին Օսմանյան Թուրքիան անվանելու «Եվրոպայի հիվանդ մարդը» (Ռուս կայսր Նիկոլայ Պավլովիչ - Մ.Զ.):

Բայց օսմանյան զավթումների ժամանակաշրջանում ամեն ինչ այլ կերպ էր: Լուծելով կայսրության անսահման մարմնում մասնատված եւ նույնիսկ փլուզման եզրին կանգնած իրար հետ գզվռտվող երկրները, օկուպանտները, անտեսելով այն ժամանակվա բոլոր սարսափները, ժամանակ առ ժամանակ նրանց բերում էին բարգավաճում եւ խաղաղ կյանք:

Դրա մասին կարող է վկայել Կոստանդնուպոլսի կամ էլ Ադրիանուպոլսի (հետագայում՝ Էդիրնե) օրինակը, որոնք Բյուզանդիայի վերջին կայսրերի ժամանակ վերածվեցին աղքատիկ քաղաքների, իսկ օսմանների ժամանակ դարձան սուլթանական թագի գոհարները: Սկզբում ագրեսորը լավ էր վերաբերվում հպատակված ազգերին, չէր ճնշում նրանց նաեւ կրոնի համար: Թվում էր՝ օսմանները ունեն բոլոր հնարավորությունները ձուլելու բուլղարներին, հայերին, հույներին, սերբերին, արաբներին, վրացիներին: Ձուլել նրանց պատմական ժառանգության, պետականության, կրոնի, մշակույթի հետ՝ կերտելու նոր, եվրասիական ազգ:

Բայց հենց կայսրությունը մի քիչ թուլացավ, պարզվեց, որ ձուլումը փուչ է: Զավթիչները զավթիչներ էին, արյունռուշտ, ագահ, անպատկառ եւ ոչ այնքան խելացի: Պարզվեց, որ հպատակեցված ժողովուրդները հարգանք չէին տածում իրենց տիրակալների նկատմամբ, եւ դա 19-րդ դարի սկզբին ապացուցեց փոքր Հունաստանը: Սահմանամերձ պատերազմների եւ մարտերի, տապալած բարեփոխումների եւ հանուն կայսրության փրկության կատարած հրեշավոր հանցագործությունների քանակով նոր ժամանակների օսմանները չունեն իրենց հավասարը:

Վերջին քիչ թե շատ ընդունակ կառավարիչն էր Մահմուդ Երկրորդը, որին հաջողվեց ցրել ենիչերիների զորքը: Նրանից հետո Ստամբուլի գահին իրար հաջորդեցին անշուք դեմքեր, որոնց «ձեռքբերումներից» կարելի է նշել միայն հայերի, հույների, ասորիների, բուլղարների անվերջ ջարդերը: Օսմանները կատաղաբար կառչում էին նախկին փառքի մնացուկներից, եւ եթե չլիներ ազդեցիկ հովանավորների միջամտությունը, ի դեմս Անգլիայի եւ Ֆրանսիայի, նրանք դժվար թե ձգեին մինչեւ 20-րդ դարի սկիզբը («Հոգիդ թեթեւանում է, - գրել էր Մարկ Տվենը, որը այցելել էր Եվրոպա 1867 թվականին, - երբ հայհոյում ես Անգլիային եւ Ֆրանսիային՝ Օսմանյան Թուրքիան մահից փրկելու ջանքերի համար, որին նա արժանի է անգամ հազարամյակի համար...»): Եվ ես հույս ունեմ, որ Ռուսաստանը պատրաստ կլինի նորից պատերազմ սկսել նրանց դեմ, Անգլիան եւ Ֆրանսիան կհասկանան, որ իրենց միջամտությունը եւ անպարկեշտ է, եւ անխոհեմ»: Ռուսաստանը երկու անգամ կարող էր տապալել կայսրությունը (1787-1791 եւ 1877-1878 թթ. պատերազմներից հետո): Դա կարող էին անել նաեւ Բալկանյան դաշինքի երկրները 1913 թվականին, եւ նույնիսկ Անտանտայի երկրները 1918 թվականին: Բայց առաջին անգամ, շատ հարյուրամյակներ հետո, օսմանների բախտը ժպտաց՝ եկավ Քեմալ Աթաթուրքը, որն, ըստ էության, ստեղծեց նոր թուրքական ազգ:

Այն ժամանակներից անցել է գրեթե 100 տարի: Էթնիկական զտումները Թուրքիային դարձրին մոնոէթնիկ պետություն, եթե հաշվի չառնենք վայրագ քրդերին, որոնք այդպես էլ չունեցան իրենց երկիրը: Անկարան ամրապնդեց իրեն եւ՛ քաղաքականապես, եւ՛ տնտեսապես: Սակայն, հասնելով Բոսֆորի ափերին, մեկ էլ պաշում ես այն զգացումից, որ քո առջեւ ոչ թե Ստամբուլն է, այլ՝ Կոստանդնուպոլիսը: Եվ ոչ թե 14-րդ դարի աղբոտված քաղաքը, այլ Հուստինիանոսի եւ Վասիլ Երկրորդի (Բարսեղ II) փայլարձակ մայրաքաղաքը: Եվ Երկնագույն մզկիթը երբեք չի խավարեցնի Սուրբ Սոֆիայի տաճարը (Այա Սոֆիա): Եվ թվում է, որ այն ամենը, ինչ թողել են օսմաններն իրենցից հետո, զավթիչ սուլթանի արյունոտ ձեռքի հետքն է տաճարի պատերին»:

**ՊՅՈՏՐ ԲՈԼՈԳՈՎ**
**lenta.ru**
**Թարգմանություն Մ. Զ.**

# Ֆրանսիայի նախագահական ընտրությունների առաջին փուլը՝ ապրիլի 22-ին

Ապրիլի 22-ին հաշված օրեր են մնացել, եւ Ֆրանսիայի նախագահության երկու գլխավոր թեկնածուները վաղուց հայտնի են. խոսքը գործող նախագահի, աջակողմյան Նիկոլա Սարկոզիի եւ սոցիալիստների առաջնորդ Ֆրանսուա Օլանդի մասին է: Ժողովրդականությամբ նրանց զիջում է ծայրահեղ աջ Ազգային ճակատի առաջնորդ Մարին Լը Պենը:

Նախընտրական հանրահավաքները բազմամարդ են, թեկնածուները հաճախ առիթը բաց չեն թողնում մրցակիցներին նսեմացնելու համար: Ֆրանսպրեսը նշում է, որ Նիկոլա Սարկոզին շեշտը դնում է ֆրանսիացիների հայրենասիրական զգացմունքների վրա: «Ես ձեզ խոստանում եմ, որ մեր արժեքներն ու գաղափարները կհաղթանակեն: Ֆրանսիայի ժողովուրդը պետք է ընտրություն կատարի: Խնդրում եմ օգնել ինձ... Կեցցե՜ Հանրապետությունը, կեցցե՜ Ֆրանսիան»՝ մոտավորապես այս ոգով է ելույթ ունենում Սարկոզին:

Բայց հանրային հարցումների համաձայն, նա առաջին փուլում կարող է ստանալ քվեների 24 տոկոսը, իսկ Ֆրանսուա Օլանդը՝ 29 տոկոսը: Վերջինս շեշտում է ուրիշ արժեքներ: «2012-ի ճակատամարտը պայքար է որակավորման եւ աշխատանքի վարձատրության հարցերում կանանց եւ տղամարդկանց հավասարության համար», ասում է սոցիալիստ թեկնածուն:

Իսկ Մարին Լը Պենը, բնականաբար, ներգաղթի կրճատման կողմնակից է, ինչպես նաեւ հանդես է գալիս Սարկոզիի քննադատությամբ: Նա սպառնում է. «Սարկոզի՛, պատասխանատվությունից չե՛ս խուսափի դավաճանության, խոստումներիցդ հրաժարվելու համար: Չես խուսափի արժանի պատժից»:



# Սիրիայում հարյուրավոր զոհայիններ անձնատուր են եղել



**Երեկ Սիրիայի Համա քաղաքում ավելի քան 200 զոհայիններ անձնատուր են եղել իշխանություններին, օգտվելով Անկախության օրվա առթիվ հայտարարված համաներումից: Այդ մասին հաղորդել է SANA գործակալությունը: Հրադադարի համաձայնագրի կիրարկման օրվանից՝ ապրիլի 12-ից ամբողջ երկրում զենքը վայր դրած անձանց թիվը մոտ 800 է: Ներքգործնախարարությունը երաշխավորել է, որ չեն հետապնդվի բոլոր այն անձինք, ովքեր կամովին կզինաթափվեն եւ մեղավոր են խաղաղ քաղաքացիների սպանության մեջ:**

**Անգլո-ֆրանսիական զորքերի դուրսբերման 66-րդ տարելիցի կապակցությամբ Դամասկոսի կառավարությունը տարածել է հայտարարություն, որտեղ նշվում է, որ Սիրիան «անառիկ ամրոց է մնում արաբական ժողովուրդների դեմ ուղղված նոր դավադրության ճանապարհին»:**

**ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը երեկ հայտարարել է, որ Սիրիայում տեղի են ունենում առանձին բռնարարքներ, բայց ընդհանուր առմամբ հրադադարը պահպանվում է: Նա Դամասկոսին կոչ է արել հանդես բերել քաղաքական կամք եւ առավելագույն զսպվածություն: Նրա խոսքերով, դա կօգնի քաղաքական երկխոսության ծավալմանը:**

**Ինչ վերաբերում է ԱՄՆ իշխանություններին, նրանք գտնում են, որ Սիրիայի իշխանությունները դեռ չեն կատարել ՄԱԿ-ի եւ Արաբական լիգայի հատուկ ներկայացուցիչ Կոֆի Անանի խաղաղ կարգավորման ծրագրի իրենց մասը: Նման հայտարարություն է արել պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչ Մարկ Թոները, որը զինադադարի խախտումների համար պատասխանատվությունը բարդել է նախագահ Բաշար Ասադի վրա:**

# ԿԺԴՀ-ն հրաժարվեց միջուկային մորատորիումից



Հյուսիսային Կորեան հրաժարվել է հրթիռային եւ միջուկային փորձարկումների մորատորիումից, որին ավելի վաղ համաձայնել էր ԱՄՆ-ի պարենային օգնության դիմաց: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

ԿԺԴՀ իշխանությունները պաշտոնական հաղորդագրության մեջ նշել են, որ ԱՄՆ-ը խախտում է կնքված համաձայնագրի պայմանները, ուստի Հյուսիսային Կորեան նույնպես այլեւս «իրեն պարտավորված չի զգում այն կատարել»: Հաղորդագրության մեջ նաեւ ընդգծվում է, որ Փենյանը կարող է ձեռնարկել «անհրաժեշտ պատժիչ միջոցներ»՝ առանց մանրամասնություններ նշելու:

Փետրվարի վերջերին ԿԺԴՀ-ն համաձայնել էր մորատորիում հաստատել միջուկային փորձարկումների, մեծ հեռահարության հրթիռների արձակումների, ինչպես նաեւ ուրանի հարստացման աշխատանքների վրա: Դրա դիմաց ԱՄՆ-ը պարտավորվել էր ԿԺԴՀ-ին մատակարարել 240 հազար տոննա պարեն եւ միջոցներ ձեռնարկել երկկողմ հարաբերությունների բարելավման ուղղությամբ:

Գործարքի շրջանակներում Փենյանը նաեւ 2009-ից ի վեր առաջին անգամ պարտավորվել էր ՄԱԳԱՏԷ-ի տեսուչներին թողնել Յոնբենի միջուկային գիտահետազոտական կենտրոն: Սակայն ապրիլի 16-ին ԿԺԴՀ-ն հրաժարվեց նաեւ այդ պարտավորությունից:

ԱՄՆ-ի եւ այլ երկրների հետ ԿԺԴՀ-ի հարաբերությունները կտրուկ վատթարացան մարտի կեսերին, երբ հայտնի դարձավ, որ հյուսիսկորեացիներն ուզում են արձակել «Ընխա-3» հրթիռ, որը պետք է ուղեծիր դուրս բերի արբանյակ: Մարտի 28-ին ԱՄՆ-ը դադարեցրեց իր խոստացած պարենի մատակարարումները եւ ավելի ուշ ԿԺԴՀ-ի իշխանություններին մեղադրեց արբանյակի արձակումը որպես մարտական հրթիռի փորձարկման քող օգտագործելու մեջ:

## Մշակույթ

*Անտոնիո Սարաֆյան. Բուենոս Այրեսի (Արգենտինա) Հայկական բարեգործական ընդհանուր միության վարչության ատենադպիր, 1999-ից Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի անդամ եւ Արգենտինայի համակարգող: Մեծ Եղեռնից փրկված Սարաֆյանների երրորդ սերնդի ներկայացուցիչն է: Հայրը՝ Գեւորգ Սարաֆյանը ծնվել է Ուրֆայում 1911-ին եւ ծնողների հետ երկար դեգերումներից հետո հասել են Արգենտինա, ամուսնացել է հայուհի Ռոզայի հետ (որոնց գերդաստանը 1896-ի ջարդերից փախել եւ հաստատվել են Հարավային Ամերիկայում - Մ. Մ.) ունեցել 6 զավակ: Անտոնիոն Սարաֆյանների ամենափոքր զավակն է եւ հիշում է հոր պատմած հուշերը, ժամանակ առ ժամանակ, հայերենով եւ իսպաներենով ընթերցում հայրիկի գրած գրքերը՝ հատկապես ցեղասպանության մասին:*

*«**Ազգը**» հյուրընկալեց Անտոնիո Սարաֆյանին եւ հետեւյալ զրույցը ունեցավ.*

# Սփյուռքի հայապահպանման խնդրում Հայաստանը մեծ դեր ունի



*Բուենոս Այրեսում կա կուռ հայկական գաղութ, մոտ 100.000 անդամով: Գործում է 7 դպրոց, որոնցից մեկը պատկանում է ՀԲԸՄ-ին եւ ունի 400 աշակերտ՝ մանկապարտեզից մինչեւ ավարտական դասարաններ: Հայ առաքելական եկեղեցու Արգենտինայի թեմում գործում է 7 եկեղեցի, որոնք թեմի առաջնորդ Գիսակ արք. Մուրադյանի ջանքերի շնորհիվ մեծ դեր ու նշանակություն ունեն համայնքի կրթական, մշակութային եւ հոգեւոր կյանքում:*

**- Պրն Սարաֆյան, Սփյուռքում փակվում են հայկական դպրոցները, արդյո՞ք ծրագրեր մշակում եք, որ նման բան չլինի ձեզ մոտ:**

- Դա, իհարկե, լուրջ խնդիր է եւ մենք՝ Բարեգործականը, եկեղեցին լուրջ ծրագրեր ենք մշակել: Ավարտական դասարանի աշակերտներին ուղարկում ենք Հայաստան, էլ ավելի լավ ճանաչելու Մայր հայրենիքը, մշակույթը եւ ավանդույթները: Արդեն 700 աշակերտ եղել է Հայաստանում: Երկրորդական դասարանի աշակերտները մեկ տարի աշխատում են մեր դպրոցի ուրբաթ օրվա ռեստորանում, որտեղ նրանց մայրերը հայկական ճաշեր են պատրաստում եւ այդ ճաշացանկը հրամցնելով գումար են վաստակում Հայաստան այցելելու նպատակով: Այսօր մենք շատ ենք աշխատում երիտասարդներին հայ պահելու, հայեցի դաստիարակելու հենց դպրոցում, որ նրանց հոգին ամբողջովին լցվի հայրենասիրությամբ: Համահայկական խաղերին մշտապես մասնակցում են մեր մարզիկները եւ այդ ուղեւորությունը տարեց-տարի ավելի է կարեւորվում ու դպրոցներում մարզական խմբերը շատանում են: Երբեմն ընտանիքներում չեն ուզում հայերեն խոսել, Հայաստանի մասին նույնիսկ լսել, բայց երբ գալիս են Հայաստան, համբուրում են հայկական հողը, մի տեսակ փոխված ու վերածնված են վերադառնում, սկսում են էլ ավելի ոգեւորված աշխատել: Այդ ջերմությունը, ոգեւորությունը պահելու գործում հայրենիքն էլ ինչ-որ չափով իր առաքելությունն ունի Սփյուռքի կառույցները ամուր պահելու, հայապահպանությունը ուժեղացնելու խնդրում:

**- Ի՞նչ եք ակնկալում հայրենիքից եւ հիմնականում ո՞ր ոլորտներն եք առաջնային համարում:**

- Հայրենիքից այսօր երկու բանի կարիք ունենք՝ հայապահպանության խնդրում. մշակութային ոլորտում եւ ուսուցիչների վերապատրաստման հարցում: Այս երկու խնդիրները ամենակարեւորն են, որպեսզի սփյուռքը հայ մնա ու իր զավակներին հայեցի դաստիարակի: Այդ խնդրում, իհարկե, Բարեգործականը շատ մեծ գործունեություն է ծավալում, որպեսզի Սփյուռքի դպրոցները արդիականանան, ուսուցիչները վերապատրաստվեն: Հայրենիքում հայոց լեզվի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ անցկացվում են եւ դրան մեր դպրոցի ուսուցիչները մասնակցում են, ու արդյունքը շոշափելի է:

**- Պրն Սարաֆյան, մշակույթի ոլորտում ի՞նչ ծրագրեր եք իրականացնում եւ եթե չեմ սխալվում՝ 2011-ին Բուենոս Այրես էիք հրավիրել մեր հայտնի երաժիշտ Արա Գեւորգյանին, կմանրամասնե՞ք...**

- Անցած տարի մենք տոնեցինք Բուենոս Այրեսում հիմնադրված ՀԲԸՄ-ի 100-ամյակը, որին իր մասնակցությունն էր բերել նաեւ Վեհափառ հայրապետ Գարեգին Բ-ն: 500-հոգանոց մեծ ճաշկերույթ եղավ: Քաղաքապետարանի հետ համաձայնության եկանք ու պատրաստեցինք մշակութային շատ մեծ ձեռնարկ «Պլազա դե մայո» կառավարության տան առջեւ: Հայկական մշակույթի բացօթյա 6 ժամ տեւողությամբ մշակութային փառատոնին, ՀԲԸՄ-ն իր 100-ամյակի եւ Հայաստանի 20-ամյակի առիթներով Հայաստանից հրավիրել էր անվանի երաժիշտ-երգահան Արա Գեւորգյանին, իր խմբով: Փառատոնի վերջին 2 ժամերի ընթացքում նվագում էր Արա Գեւորգյանը Բուենոս Այրեսի սիմֆոնիկ նվագախմբի հետ, որը ղեկավարում էին Լորի Անտունյանը (Կանադա) եւ Սանտյագո Չոտսուրյանը (Բուենոս Այրես): Ելույթներ ունեցան նաեւ մեր քաղաքի հայկական չորս պարախմբերը, հայկական ժողովրդական եւ էստրադային խմբերը, որոնց միացան «Արգենտինյան տանգո» լավագույն խմբերը:



**- Ի՞նչ արձագանքներ ունեցավ այդ յուրօրինակ մշակութային փառատոնը:**

- Արձագանքները հրաշալի էին: Փառատոնը բացի 15.000 ներկա գտնվողներից 4 հեռուստաթերթներով ուղիղ հեռարձակվեց ու մեծ հետաքրքրություն առաջացրեց: Թերթերը, ամսագրերը շատ հանգամանալից անդրադարձան: Իհարկե, փառատոնի բացումը ազդարարվեց Արգենտինայի եւ Հայաստանի պետական հիմների հնչյուններով: Ներկա էին ու ողջունեցին Բուենոս Այրեսի մշակույթի նախարար Էռնան Լոմբարդին, քաղաքապետ Մաուրիսիո Մաքրին: Ի դեպ, եւ՛ մշակույթի նախարարը, եւ՛ քաղաքապետը ապրիլի 22-ին պաշտոնական այցով կլինեն Երեւանում եւ ինչպես ՅՈՒՆԵՍԿՕ-ն է որոշել՝ «Գրքի մայրաքաղաքի» բանալին Բուենոս Այրեսից կփոխանցվի Երեւանին:

**- Պրն Սարաֆյան, ինչո՞ւ այդ փառատոնը որոշվեց փողոցում անցկացնել:**

- Այդ որոշումն էլ հատուկ էր ընդունվել, քանի որ նպատակ ունեինք, թե՛ տեղացիներին, թե՛ օտարներին ծանոթացնելու հայկական մշակույթը:

**- Առաջիկայում ի՞նչ ծրագրեր ունեք:**

- Այս տարվա հունիսի 1-ին նորից նույն վայրում, քաղաքապետարանի հետ կնքված համաձայնագրի շրջանակներում, կազմակերպելու ենք մեկ այլ խոշորածավալ ձեռնարկ՝ նվիրված հայ գրատպության 500-ամյակին եւ արդեն Նյու Յորքից հրավիրել ենք «Շուշի» հայկական պարախմբին: Հայաստանից հատուկ հրավիրել ենք մաեստրո Հովհաննես Չեքիջյանին, ղեկավարելու այստեղի 4 հայկական երգչախմբերի ելույթը: Կլինեն հետաքրքրական համերգային ծրագրեր: Սեպտեմբերի առաջին շաբաթը նվիրելու ենք Սայաթ-Նովայի 300-ամյակին եւ բազմաթիվ ձեռնարկներ են ծրագրված: Հայաստանից հրավիրելու ենք թառահար Նորայր Դավթյանին եւ քյամանչահար Արմեն Եգանյանին, որոնք այդ օրերին ելույթներ կունենան: Իսկ հոկտեմբերին հրավիրել ենք «Գոհար» երգչախմբին ու անհամբեր սպասում ենք նրանց:

**- Պրն Սարաֆյան, համայնքի առօրյան ինչպիսի՞ն է, երիտասարդները ի՞նչ հետաքրքրություններ ունեն:**

- ՀԲԸՄ տիկնանց հանձնախումբը ոչ միայն ամեն ուրբաթ օրերին դպրոցի ռեստորանում համով-հոտով ճաշեր է պատրաստում եւ հրամցնում այցելուներին, այլեւ հրատարակում է իսպաներեն լեզվով հայկական խոհանոցի գաղտնիքները ու դրանց պատրաստման բաղադրատոմսերը՝ ընդգրկելով Արեւմտյան եւ Արեւելյան Հայաստանի բոլոր տարածաշրջանների ճաշատեսակները: Իսկ երիտասարդական միությունը թողարկում է ժամանակակից ամսագիր «Երրորդ սերունդ», որի էջերում տեղ են գտնում աշխարհի տարբեր ծայրերում ապրող ու գործող հայ անվանի մարդկանց մասին նյութեր՝ երիտասարդների տեսանկյունից:

**- Պրն Սարաֆյան, դուք արդեն քանիցս եղել եք Երեւանում, ի՞նչ փոփոխություններ եք նկատել, ինչպիսի՞ն է Երեւանը ձեր աչքերով:**

- Այսօր Երեւանը շատ արդիական, եվրոպական քաղաքի է նման: Սակայն մեր հին շենքերը, մշակութային արժեքները պահպանելու խնդիր ունեն: Քաղաքաշինությունը պետք է բծախնդիր եւ մտածված անել: Երեւանից մի քիչ հեռանում ես, շատ վատ վիճակ ես տեսնում: Անհրաժեշտ է մարզերի զարգացման շուրջը ծրագրեր իրականացնել: Իրականացել է մեր պապերի, հայրերի երազանքը՝ Անկախություն ենք ձեռք բերել ու պետք է ամեն կերպ աշխատենք, որպեսզի մեր հայրենիքը էլ ավելի ծաղկի ու զորանա: Վերջին 6 տարիների ընթացքում հայկական գաղութի կյանքում մեծ դեր է խաղացել Արգենտինայում ՀՀ նախկին դեսպան Վլադիմիր Կարմիրշարյանը: Մենք ապրում եւ շնչում ենք մայր հայրենիքով. որքան նա հզորանա, Սփյուռքն էլ կհզորանա: Եվ այս պաշտոնական այցի առիթը օգտագործելով Բուենոս Այրեսի ամբողջ հայության անունից ուզում եմ «**Ազգ**» օրաթերթին փոխանցել մեր շնորհակալությունները, քանի որ մենք հենց այդ օրաթերթից ենք առաջինը տեղեկանում մայր հայրենիքի անցուդարձի մասին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## ԼՈՒՐԵՐ

# Լեոնարդո Ալիշանի Free Fall գիրքը՝ նաեւ հայերեն




**Բանաստեղծ եւ գրող Գուրգեն Արզումանյանի թարգմանությամբ Գլենդեյլում (Կալիֆոռնիա) լույս է տեսել իրանահայ Լեոնարդո Ալիշանի «Ազատ անկում» (Free Fall) կարճ պատմվածքների ժողովածուն, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:**

**Սփյուռքում երկլեզվից բացի, նոր եռալեզու մշակույթ է ձեւավորվում, գրում է թերթը, օրինակ բերելով Լ. Ալիշանի գիրքը, որը հայկական, իրանական եւ ամերիկյան մշակույթների յուրօրինակ ձուլվածք է: Առաջին պատմվածքում առասպելական թռչունը հեղինակին է հանձնում անհրաժեշտ սերմահատիկները, որով էլ վերջինս կարողանում է հորինել իր պատմվածքները: Վերջին պատմվածքում հեղինակը մերժումներ է ստանում հրատարակչատներից, որովհետեւ նրա եռամշակույթ բանաստեղծությունները ոչ ոքի չեն հետաքրքրում: Միջանկյալ պատմվածքներում տարագրության, վերապրումի ինքնաճանաչման եւ ինքնահաստատման պայքարի շարադրանքն է, որը հասկանալի է լինում «ծիծեռնակների համայնքին»: Լեոնարդո Ալիշանը յուրահատուկ ձեւով է կարողացել մեկնաբանել սփյուռքահայի հոգեվիճակը, իսկ թարգմանիչ Արզումանյանը, որը 1995-2000 թվերին խմբագրել է «Բաց նամակ» գրական հանդեսը Գլենդեյլում, շնորհակալ գործ է կատարել՝ գիրքը հայ ընթերցողին ներկայացնելով:**

**Հատորը, որի արժեքն է 25 դոլար, կարելի է պատվիրել՝ այցելելով azatangum@gmail.com կայքը:**

Հ. Ծ.

# Նոր հրատարակություն

**Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ լույս է ընծայել ժամանակակից հույն ուղղափառ աստվածաբան Ստիլիանոս Պապադոպուլոսի «Վիրավոր արծիվը: Ս. Գրիգոր Աստվածաբան» աշխատության հայերեն թարգմանությունը: Թարգմանությունը հունարենից կատարել է Մարիաննա Ապրեսյանը:**

**Գիրքը նվիրված է 4-րդ դարի Ընդհանրական եկեղեցու խոշոր աստվածաբան Գրիգոր Նազիանզացու կենսագրությանը: Այս աշխատությունը բազմիցս հրատարակվել է եւ իբրեւ կենսագրական պատմավեպ լայն տարածում ունի ժամանակակից ընթերցողների շրջանում: Այս գրքի կարեւորությունը հայ իրականության մեջ պայմանավորված է նրանով, որ Գրիգոր Աստվածաբանը հայ եկեղեցու տոնելի սրբերից է եւ Կապադովկյան մյուս հայրերի հետ զգալի ազդեցություն է գործել Հայ եկեղեցու աստվածաբանության ձեւավորման եւ զարգացման վրա:**

**Գիրքը հրատարակվել է Մայր աթոռի բարերար Գաբրիել Չեմպերճյանի մեկենասությամբ:**

# Էգոյանին շնորհվել է Քլոտրուդիսի անվան մրցանակ

**Քլոտրուդիս անկախ ֆիլմերի ընկերության 18-րդ տարեկան մրցանակաբաշխության ժամանակ մարտի 18-ին պատմական Բրատլ թատրոնում (Հարվարդի հրապարակ, Քեմբրիջ, Մասաչուսեթս) «Hall of Fame» մրցանակ է շնորհվել կանադահայ ճանաչված կինոռեժիսոր Ատոմ Էգոյանին՝ կինոարվեստում իր արձանագրած հաջողությունների համար:**

**«Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի փոխանցմամբ, Քլոտրուդիս ընկերությունը Բոստոնում գործող շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որ անկախ ֆիլմերի ակտիվ դիտումներ եւ քննարկումներ է անցկացնում, համագործակցում տեղի կինոթատրոնների, ռեժիսորների, դերասանների հետ եւ հանրության ուշադրությանն է հանձնում որակավոր ֆիլմեր:**

**«Մրցանակը, որը մենք հակիրճ ձեւով «Տրուդի» ենք անվանում, ստեղծվել է 18 տարի առաջ Քլոյե եւ Գերտրուդիս երկու անուններով կատուների պատվին», բացատրել է հանդիսության ժամանակ ընկերության նախագահ Մայքլ Կուլֆորդը: Այնուհետեւ նա ներկայացրել է Էգոյանի ստեղծագործական մտքի արդյունքը հանդիսացող ընտանիքի ժառանգության եւ հիշողության հետ կապված ֆիլմերը, որոնք արժանի են արտակարգ ուշադրության:**

**Ընդունելով «անկեղծ զգացումներով» իրեն շնորհված մրցանակը, Էգոյանը նշել է. «Դուք անհավատալիորեն մեծ գործ եք կատարում հանրությանը ներկայացնելով ընտիր ֆիլմեր, դրանով իսկ դաստիարակելով նոր սերնդի ներկայացուցիչներին եւ հղկելով նրանց ճաշակը»:**

**Ավելացնենք, որ Էգոյանի կինը՝ Արսինեն 2002 թվին նույնպես արժանացել էր Քլոտրուդիսի հատուկ մրցանակին իր «հմայիչ կարիերայի համար»: Նաեւ այն, որ մարտի 16-ից 18-ը նույն Բրատլ թատրոնում ցուցադրվել են Էգոյանի ֆիլմերը:**

Հ. Ծ.

ԱԶԳ

# Օրվա հետքերով

## «Հայաստան: Քաղաքակրթության դրոշմները»

Կազմակերպությամբ Գաբրիելա Ուլուհոջյանի, Պողոս Լեւոն Զաքիյանի եւ Վարդան Կարապետյանի՝ վերոնշյալ խորագրի ներքո մինչեւ ապրիլի 10 տպավորիչ ու խիստ ուշագրավ մի ցուցահանդես է գործել Վենետիկի Կոռեր թանգարանում՝ նվիրված հայ գրատպության 500-ամյակին: Դրան անդրադարձել է «Նյու Յորք թայմսի» թղթակից Ռոդերիկ Կոնվեյ Մորիսը՝ նշելով, որ հայկական քաղաքակրթությունը ամենահներից մեկն է, որ մինչեւ օրս շարունակվում է, չնայած երկար ժամանակ հայերը չեն ունեցել պետականություն: «Այս հանգամանքը առավել մեծ նշանակություն է հաղորդել գրի ու գրականության հանդեպ հայերի տածած պաշտամունքին, որի շնորհիվ էլ նրանք պահպանել են իրենց ինքնությունը, ազգային դիմագիծը», գրում է նա, շարունակելով որ նրանք (հայերը) այնքան են կարեւորել գրավոր խոսքը, որ գրիչները հատուկ խորհուրդներ են ամրագրել մատյաններում, թե ինչպես պետք է պահպանել գրքերը եւ փրկել դրանք, «եթե երբեւէ հայտնվեն այլոց սխալ ձեռքերում»:



Հեղինակը չափազանց հետաքրքրական տեղեկություններով է համեմում իր հոդվածը, նշելով այնպիսի մանրամասներ, որ մեզանից շատերին գուցե ծանոթ չեն:

Հատկապես ուշագրավ են հայերի առաջին առնչությունները Վենետիկին, որոնք վերաբերում են քաղաքի ծագման շրջանին, երբ դեռ Բյուզանդիայի հեռավոր արեւմտյան ուղեկալներից մեկն էր: 6-րդ դարում Ռավեննայի առաջին եքսարքոս հայազգի Նարսես Պատրիկին (541-568) է վերագրվում Վենետիկի երկու հռչակավոր եկեղեցիների՝ Ս. Թեոդորոսի եւ Ս. Գեմինիանոսի ու Ս. Մենայի կառուցումը: Իսկ մեկ դար անց, Տորչելլոյի բազիլիկան կառուցել է մի այլ եքսարքոս՝ Իսահակ Հայկազնը (625-643): Հայ համայնքը Վենետիկում կազմավորվել է 13-րդ դ. սկզբին, երբ աշխույժ ծովային առեւտրական հարաբերություններ են հաստատվել Վենետիկի եւ Կիլիկյան Հայաստանի միջեւ: 13-րդ դ. առաջին կեսին հայերը Վենետիկում ունեցել են «Հայոց Տուն», որը համայնքին նվիրել է Վենետիկի դոժ Մարո Ծիանին: Վենետիկը դարձել է հետագայում հայկական տպագրության կենտրոն: Այստեղ է 1512-ին լույս տեսել հայերեն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը»:

Ցուցահանդեսը բացվում է, գրում է հեղինակը, Երեւանի Ազգային պատկերասրահից բերված ու ինքնուրույն մթնոլորտ ստեղծող հայ նկարիչ Հովհաննես Այվազովսկու «Նոյը իջնում է Արարատից» կտավով: «Այս լեռը արտակարգ հետաքրքրություն է ներկայացնում հայերի շրջանակում եւ խորհրդանշում է մարդկության փրկությունը», գրում է նա, ապա անցնում քրիստոնեությունը որպես պետական կրոնի ընդունման եւ հաջորդ անկյունաքարային թվականին, երբ ստեղծվեցին հայոց այբուբենի տառերը, որոնցով էլ սկիզբ դրվեց Սուրբ գրքի եւ հետագայում այլ գրքերի թարգմանություններին: Իր հոդվածում Ռոդերիկ Կոնվեյ Մորիսը նաեւ նշում է հայերեն նկարազարդված ձեռագրերի, Մխիթարյան միաբանության, «Բազմավեպ» հայագիտական հանդեսի եւ վերջապես լորդ Բայրոնի մասին:

Հոդվածն ամբողջությամբ արտատպել է «Արմինյն միրոր սպեքտեյթր» շաբաթաթերթում, որտեղից էլ քաղել ենք մեր տեղեկությունները:

Հ. Ծ.

ԱՆԻՐԱՎ ՄԵՂԱԴՐԱՆՔ

## Մի՞թե մենք պատասխանատու ենք Ռոլան Կոբիայի համար

Օրեր առաջ ԵՄ ներկայացուցիչ Ռոլան Կոբիան ասել էր, որ «Ադրբեջանի էներգետիկ ռեսուրսները հավիտենական չեն»: Այդ գնահատականին անդրադարձել են տարածաշրջանի երկրների, այդ թվում՝ Հայաստանի փորձագետները եւ վերլուծաբանները: Լռում էր միայն ադրբեջանական կողմը: Հասկանալի է, Բաքուն այնքան համարձակություն չունի, որպեսզի քննադատության թիրախ դարձնի ԵՄ ներկայացուցչին: Բայց լռելն էլ բանի նման չէր: Եվ ահա իշխանությունները ոմն Աքպեր Հասանովի հրահանգավորել են եվրոչինովնիկին մի կողմ թողնել եւ «բզկտել» հայերիս:

Պարզվում է՝ Հայաստանում «միայն սպասում են, որ Ադրբեջանի հարստությունն սպառվի, բայց դա անիրականանալի երազանք է»: Ո՞վ ասաց, որ մենք քնում եւ արթնանում ենք՝ սպասելով, թե երբ կավարտվի «ադրբեջանական նավթագազային բումը»: Ինչո՞ւ պիտի մենք դրանով մտահոգված լինենք: Մեր փոխարեն Իլհամ Ալիեւի վարչախումբն է ամեն ինչ անում, որ Ադրբեջանի բնական պաշարները հնարավորինս արագ սպառվեն: Եվ դա ունի շատ պարզ բացատրություն. երբ Ռոլան Կոբիան ասում է, որ Ադրբեջանի «էներգետիկ ռեսուրսները հավիտենական չեն», Իլհամ Ալիեւը հասկանում է թափանցիկ ակնարկը՝ հավիտենական չէ նաեւ իր իշխանությունը:

Աշխարհում հավիտենական ոչինչ չկա: Մարդու կյանքն էլ ժամանակավոր է: Թերեւս մշտական է Ադրբեջանում կառավարող վարչախմբի մոլեգին կախվածությունը փողից, շքեղությունից եւ «պատմության մեջ հավերժանալու» ձգտումից: Եվ Իլհամ Ալիեւը լավագույնս է օգտագործում հնարավորությունը: Հարստանում է: Աքպեր Հասանովը երեւի ժամանակ է ունենում կարդալու նաեւ ադրբեջանական մամուլը: Ահա, օրերս Contact.az-ը հրապարակել էր Սաբիրաբադի շրջանից մի կնոջ՝ Իլհամ Ալիեւին հասցեագրած դիմում-նամակը:

«Տունս ջրասույզ է եղել, ամուսինս՝ մահացել: Կիսավեր շենքում ապրում եմ տղայիս, հարսիս եւ չորս թոռներիս հետ: Խնդրում եմ միջոցներ հատկացնեք, որպեսզի նոր տուն կառուցեմ: Հակառակ դեպքում ստիպված կլինեմ Ադրբեջանից հեռանալ»: Լրատվամիջոցը հնարավորություն էր ընձեռել, որ այցելուներն իրենց տպավորությունները ներկայացնեն: Եվ մի անանուն այցելու գրել էր. «Ինչո՞ւ եք անհանգստացնում մեր բազմազբաղ նախագահին: Առանց այդ էլ նա չափազանց մեծ հոգսեր ունի: Դեռ պիտի հասցնի բոլոր զավակների, ծնված եւ ծնվելիք թոռների համար Դուբայում տներ գնել: Փող նրան որտեղի՞ց, որ ձեզ օգնի»:

Ահա եւ՝ ադրբեջանական իշխանությունների, անձամբ «նորին բռնապետական մեծության» արդարացի գնահատականը: Դրանում հայկական կողմը մեղք չունի: Ինչպես եւ չարժե Ռոլան Կոբիայի դեմ ատամի տակ կուտակած թույնը շպրտել սխալ հասցեով: Մի՞թե մենք պատասխանատու ենք նրա ասածների եւ հետագա ասելիքի համար:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

## Արգենտինան կազգայնացնի նավթարդյունաբերությունը

**Արգենտինայի իշխանությունները մտադրվել են ազգայնացնել նավթարդյունաբերությունը: Նախագահ Քրիստինա Կիրշները խորհրդարանին է դիմել օրինագիծ նախապատրաստելու խնդրանքով: Բուենոս Այրեսի ծրագրերը բողոքների ալիք են բարձրացրել Իսպանիայում: Արգենտինական VPF խոշորագույն նավթային ընկերության սեփականատերը իսպանական Repsol ընկերությունն է: Ազգայնացման հետ կապված լուրերը 8 տոկոսով արժեզրկել են Repsol-ի բաժնետոմսերը: Repsol-ի ղեկավարությունը հայտարարել է, որ VPF ընկերության շուկայական արժեքը 18 մլրդ դոլար է: Իսպանացիները մտադիր են փոխհատուցում պահանջել՝ հիմք ընդունելով այդ գումարը: Իսպանական ընկերությունը նաեւ հայտարարել է, որ ազգայնացման ծրագիրը «անօրինական եւ խտրական է», ուստի Repsol-ը կփորձի դատական կարգով հասնել դրա չեղարկմանը:**


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տիչինայի 34/6 | Կաթսայատուն | 58.56 | 58.56 | 3,300,000 |
| 2 | Հր. Քոչարի 14/3 | Կաթսայատուն | 250.48 | 250.50 | 12,190,000 |
| 3 | Ռայնիսի փողոց 26/3 | Կաթսայատուն | 240.75 | 240.75 | 7,100,000 |
| 4 | Մոլդովական փողոց 50/9 | Կաթսայատուն | 192.66 | 163.10 | 12,230,000 |
| 5 | Նալբանդյան 50շ. 191 տարածք | ոչ բնակելի տարածք | | 45.40 | 4,500,000 |
| 6 | Խորենացի 47 | Կաթսայատուն | 144.00 | 144.00 | 11,820,000 |
| 7 | Ուլնեցու փողոց 3-րդ փակ. 4/2 | Կաթսայատուն | 249.30 | 129.70 | 14,650,000 |
| 8 | Նորաշխարհյան 17/9 | Կաթսայատուն | 238.12 | 238.12 | 11,950,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ մայիսի 4-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2012թ մայիսի 4-ը, ժամը 14.00-ն:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի անվանումը | Պետհամարանիշը | Թողարկման տարեթիվը | Շահագործման տարեթիվը | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մերսեդես Բենց S-320 | 080LL55 | 1999թ | 2003թ | 3,600,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ մայիսի 4-ին ժ.16.00-ին, ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2012թ մայիսի 4-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը

**հայտարարում է մրցույթ՝ ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների համար**

**1. Ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոն**
ֆիզմաթ գիտությունների դոկտոր կամ մանկավարժական գիտությունների դոկտոր

2. Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոն
կենսաբանական գիտությունների դոկտոր կամ աշխարհագրական գիտությունների դոկտոր

**3. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոն**
մանկավարժական գիտությունների դոկտոր

**4. Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոն**
մանկավարժական գիտությունների դոկտոր

***Ծանոթություն.***
Հավակնորդները համալսարանի գիտական քարտուղարին են ներկայացնում.
- դիմում ռեկտորին,
- կադրերի հաշվառման անհատական թերթիկ,
- քաղվածք աշխատանքային գրքույկից,
- համառոտ ինքնակենսագրություն՝ ժամանակագրական տեսքով,
- բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- գիտական աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները,
- տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը,
- տվյալներ պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ 30 օր՝ հայտարարության հրապարակման օրվանից:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել համալսարանի գիտական քարտուղարին:

Հասցեն՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 17, N 301 սենյակ, հեռ. 59 70 28:

***ՌԵԿՏՈՐԱՏ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60


Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 18.4.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: